նացքները լուծելու (քափօրման) և կաղմակորելու-  
համար, պետք է ունենան բլուրներ (գորք):

§ 94. Մանյովրային աշխատանքը արագացնելու,  
վագոնների ջարդը կանխելու և աշխատանքի պայման-  
ները բարձրագելու համար, տեսակավորող բլուրները  
մեքենայացվում են, շինվում են վագոնային դանդա-  
ղիչներ՝ մեքենայացրած սանդալներով և սլաքների  
կենտրոնացումով:

§ 95. Նոր կառուցվող բլուրները (գորք) պետք է  
չինվեն այն հաշվով, վոր հետազայում հնարավոր լինի  
նրանց մեքենայացումը:

§ 96. Բոլոր, թե մեքենայացրած, և թե վոչ մե-  
քենայացրած բլուրները պետք է կահավորված լինեն  
լուսաֆորային ազդարարումով, կարգադրությունները  
հաղորդելու համար՝ բարձրախոսներով և այնպիսի  
սարքավորումներով, վորոնցով հաղորդվում են վագոն-  
ների քանակի և ուղղության մասին տեղեկություն-  
ներ:

## ԵՐ Պ Դ Լ Ո Ւ Ի

### ԱԶԴԱՐՄՐՈՒՄ, ՍԼԱԲՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ՅԵՎ ՈՒՂԵԿԱՊԱԿՑՈՒՄ

§ 97. Միության յերկաթզծերում գործադրվում  
են ազդարարման, կենտրոնացման և ուղեկապակցման  
հետևյալ տեսակները.

ա) Մշտական և փոխադրական ազդանշաններ :  
բ) Գծային և կայարանային ավտոմատիկ և կիսա-  
ավտոմատիկ ուղեկապակցում :

- գ) Ելեկտրա-մականային սկսում :
- դ) Սլաքների և ազդանշանների կենտրոնացում :
- յ) Դիսպեչերական կենտրոնացում :
- զ) Քեր-ազդարարում և ավտո-ստոպներ :
- ե) Վերահսկողական կողագեքներ :
- ը) Ավտոմատիկ գծացանցությային ազդարարում և
- թ) Դիմը խափանող ազդանշաններ և պիտույքներ :

## ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

§ 98. Ազդանշանները ծառայում են գնացքների  
անվտանգ յերթեկումը ապահովելու համար :

Ազդանշաններով դնացքային անձնակազմին և  
շարժման հետ կապ ունեցող աշխատավորներին ցուց-  
մունքներ են տրվում զնացքների յերթի և մանյովրու-  
յին աշխատանքի միջոցին :

§ 99. Միության յերկաթուղային տրանսպորտում  
գործադրվում են միմիայն ՀՃՁԿ-ի կողմից հաստատ-  
ված ազդանշանները :

§ 100. Սեմաֆորները, լուսաֆորները և կանխա-  
զդուշացնող ազդանշանները չեն թույլատրվում հիմնե-  
այնպիսի տեղերում, վորոնք չեն ապահովում նրանց  
յերեղումը զնացքից :

§ 101. Յեթե ավտոկապակցումով չկահավորված  
ուղեկանական պայմանների չնորդիվ, տե-  
սանելիությունը այնպես է, վոր մուտքի և անցույթի  
ազդանշանները անկարելի յե նկատել արդելակման ու

դուն հավասար տարածությունից, ապա նրանց առաջ դրվում են կանխազդուշացնող աղղանչաններ, վորոնք կրկնում են հիմնական աղղանչանների ցուցմունքը:

Բեռնալարված գծերում (ցրոնադրյանու լինի), անկախ կանխազդուշացման աղղանչանային սարքավորումներից, բոլոր սեմաֆորների, լուսափորների և կանխազդուշացման սկավառակների առաջ դրվում են աղղատու վահաններ:

§ 102. Սեմաֆորները, լուսափորները և կանխարդուշացման աղղանչանները դրվում են գնացքների շարժման ուղղության աջ կողմից՝ կամ պատսպահմող գծի առանցքի վրա:

Աղղանչանները յուրաքանչյուր գծով պետք է դրվեն այնպես, վորպեսզի գնացքից անհնար լինի նրանց ընդունել հաճելան գծերին վերաբերող աղղանչանների տեղ:

§ 103. Անջատման կետի մուտքի աղղանչանները պետք և զետեղված լինեն առաջին մուտքի սլաքից՝ հետեղյալ տարածությունների վրա. լուսափորները 15 մ-ից վոչ մոտ, իսկ սեմաֆորները 50 մ-ից վոչ մերձ:

§ 104. Յուրաքանչյուր առաքման գծի յելքի աղղանչանները պետք են դրվեն այն տեղի դիմացը, մորը հատկացված ե մեկնող գնացքի լոկոմոտիվի կանդութիւնի համար:

§ 105. Անցույթի աղղանչանները դրվում են բլուրակնեմասի սահմաններում:

§ 106. Յեթև կիսաալտոմատիկ ուղեկապակցումով կահավորված գծային պոստում կա կցվող ճյուղի կամ գծի ոլոր, ապա այս պոստի անցույթի սեմաֆորը կամ

լուսափորը կապակցվում ե սլաքի հետ կամ թե դրվում են մուտքի և յելքի աղղանչաններ:

§ 107. Միենանույն մակարդակով յերկու յերկաթուղային գծի հատումը պետք ե պաշտպանվի պատսպահման աղղանչաններով, հատումից 50 մ-ից վոչ պահանջուալորությամբ:

Այս աղղանչաններն իրար հետ պետք ե այնպես լինեն կապված, վոր նրանցից մեկի բացումը հնարավոր լինի միմիայն հակառակորդ աղղանչանի վակ ցուցմունքի դեպքում:

§ 108. Բացվող կամուրջները պետք ե պաշտպանվեն պատսպարման աղղանչաններով կամրջի բացվող ժամի սկզբից 50 մ-ից վոչ պահանջուալորությամբ:

Աղղանչանը պետք ե սարքավորված լինի այնպես, մոր նրա բացումը հնարավոր լինի միմիայն կամրջի նորմալ դիրքի միջոցին:

§ 109. Յերկաթուղային գծերի հատման և բացվող կամուրջների պատսպարման աղղանչանները պետք ե լուսացնվեն նաև հիմնական աղղանչանների ցուցմունքը կրկնող կանխազդուշացման աղղանչաններով:

§ 110. Կիսաալտոմատիկ ուղեկապակցումով ուղեմասերի մուտքի բոլոր սեմաֆորների կայմերի վրա դրվում են յելքի սեմաֆորի թեկի հետ կապված միջանցիկ յերթի (ԸԵՎՕՀՈՅ քրօխօ) սկավառակներ:

§ 111. Բոլոր աղղանչանների և սլաքային ցուցիչների լուսավորումը պետք ե ապահովի աղղանչանների ցուցմունքի պարզ յերեվումը գնացքից:

§ 112. Աղղելմում ե աղղանչանների ապակիների և վոսպնյակների վրա կիրառել այնպիսի գունավորում,

գործ չի համապատասխանում սահմանված ստանդարտներին և որինակներին:

§ 113. Գնացքի շարժման հետ կապված ազգային մեջ կիրառվում են հետեւյալ հիմնական ազգային արարական դույները.

ա) Կանգնույթ պահանջող կարմիր դույն:

բ) Արագության նվազեցում պահանջող դեղին դույն:

գ) Սահմանված արագությամբ շարժում թույլատրող կանաչ դույն:

ԳՅԱՅԻՆ ՅԵՎ ԿԱՅԱՐԱՆԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՍԻԿ ՅԵՎ  
ԿԻՍԱՎՏՈՄԱՍԻԿ ՈՒՂԵԿԱՊԱԿՑՈՒՄ

§ 114. Ավտոմատիկ և կիսավտոմատիկ ուղեկապակցման սարքավորումները մինչեւ իրենց միջոցով պաշտպանվող բլոկ-ուղեմասի աղասովելը, չպետք է թույլ տան, վորք յելքի և անցույթի ազդանշանները բացվեն:

§ 115. Ավտոկապակցման դեպքում բոլոր լուսափորները պետք է ավտոմատիկորեն փակվեն, յերբ գնացքը մուտք է գործում նրանց միջոցով պաշտպանվող բլոկ-ուղեմասիները, ինչպես և այն դեպքում, յերբ խափում է այդ գծամասերի ուղարկյան շղթաների ամբողջությունը: Միուղի միջկարարանային վաղուցդներում (ուղարկությունը) յելքի լուսափորներից մեկի բացումից հետո՝ հակառակ ուղղության բոլոր լուսափորները պետք է ավտոմատիկորեն փակվեն:

§ 116. Ավտոմատիկ և կիսավտոմատիկորեն ուղե-

կապակցումով կահավորված վաղուցդներում, ուշ թույլատրվում ե գնացքների հրում՝ և առաքման կայարանը, հրիչի կամ թե տնտեսական գնացքների վերաբարձումով յերթեկում, պետք ե կիրառվեն բանակիմականներ:

§ 117. Կայարաններում դրվող կայարանային ուղեկապակցումը, ուր կան մի քանի կենտրոնացրած պոստեր-պետք ե ապահովի:

ա) Կայարանի հերթապահի վերահսկումը պոստի կողմից գնացքներ ընդունելու, թողարկելու և առաքելու դորձողությունների, ինչպես և ներկայարանային մարշրուտների վրա:

բ) Զանազան պոստերից դեկավարվող սրաքների և ազգանշանների փոխադարձ կցումը:

## ԵԼԵԿՏՐԱ-ՄԱԿԱՆԱՅԻՆ ՍԻՍՏԵՄ

§ 118. Ելեկտրա-մականային սիստեմը չպետք է թույլատրի մականային աղասություն հանել ավյալ վազուրդին վերաբերող միաժամանակ մեկից ավելի ժաման:

§ 119. Միենույն շարակարգի (Սերիա) մականային աղասությունների գրույթը (ցւահովք) թույլատրվում է վոչ ավելի հաճախ, քան 3-վաղուրդից հետո:

§ 120. Այն վազուրդներում, ուր թույլատրվում ե գնացքների ընդյերթ (ԱՀԸ) և ժամանակի սահմանափակումով շարժում, ինչպես և մինչեւ հարեվան կայարանն ընթացող հրիչներով գնացքների յերթեկում՝ մականային աղասությունը պետք ե ապահովված ինենքուստակավոր մականներով:

§ 121. Գնացքների հրում թույլատրող վաղուրդ-ների մականացին ապարատները, ըստ վորում հրիչը նորից վերադառնում է առաջման կայարանը—պետք է լրացնվեն նաև բանալի մական ունեցող պիտույքներով:

ՍԼԱԲՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

§ 122. Բոլոր տիպերի կենտրոնացման սարքավորումները պետք ե ապահովեն սլաքների և ազդանշանների չաղկապումը, չթույլատրելով՝

ա) Տվյալ մարշուտին համապատասխանող աղուանշանների բացումը, յեթե սլաքները դրված չեն պատշաճ դրության մեջ, իսկ հակառակորդ մարշատների ազդանշանները փակված չեն:

բ) Մարշուտի մեջ մտնող սլաքի փոխադրումը կամ հակառակորդ մարշուտի ազդանշանի բացումը՝ յերբ սահմանված մարշուտը սլաշտպանող ազդանշանը բաց է:

§ 123. Մեխանիկական կենտրոնացման սարքավորումները պետք ե՝

ա) Ապահովեն սլաքի հերձահատման (բարձ) դեպքում նաև սլաքային լծակի հերձատումը:

բ) Չթույլատրվեն լծակի փոխադրումը մինչեւ հերձատուման վերացումը:

գ) Մաքային քարշը խզվելիս՝ համապատասխան սլաքը փակեն իր ծայրահեղ դիրքերից մեկում, իսկ սեմաֆորի քարշը խզվելիս՝ փակեն սեմաֆորի թեր:

§ 124. Ելեկտրական կենտրոնացման սարքավորումները պետք ե.

ա) Չթույլատրվեն սլաքի փոխադրումը դնացքի կազմի տակ:

բ) Ապահովեն սլաքի հերձատուման վերահսկումը և միաժամանակ տվյալ մարշուտը սլաշտպանող աջ-զանշանի փակումը: Նոր և վերակառուցվող ելեկտրագնացների պահանջման սարքավորումները պետք ե ունենան այնպիսի սարքավորում, վորը ավտոմատիկորեն չթույլատրի գնացքի ընդունումը զբաղված գծի վրա:

§ 125. Կենտրոնացրած սլաքների ուժատարներն ու չաղկապիչները պետք ե.

ա) Ապահովեն մի սայրի (օստրյա) քիպ հպումը իր շրջանակային ուղարկությունը և ծայրահեղ դրությունը:

բ) Ապահովեն մյուս սայրի հեռացումը իր շրջանակային ուղարկություն՝ 125 մմ-ից վոչ պակաս տարածությամբ:

գ) Զպետք ե թույլատրեն սլաքի կցումը, յերբ հպված սայրի և շրջանակային ուղարկությունը 4 մմ ե կամ ավելի:

կենտրոնացրած սլաքային ապարատների լծակները, նայելով նրանց գործադրմանը, պետք ե ներկված լինեն զանազան գույներով:

ԴԻՍՊԵՏՉԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

§ 126. Դիսպետչերական կենտրոնացումն ապահովում է՝

ա) Մի չարք կայարանների ազդանշանների և վագոնների դեկավարումը մի կետից:

բ) Ազգանշանների, սլաքների և դժերի հսկումը անջատական կետերում և նրանց կից բլոկ-ռողեմասերում:

Դիմումետչերական կենտրոնացման սարքավորումները պետք են թույլատրեն, վոր մանյովային ուժառանքի միջոցին, հենց անջատական կեռումը սլաքների ղեկավարումը փոխարինվի ձեռքի ղեկավարումով:

### ՔԵԲ-ԱԶԴԱՐԱՐՈՒՄ (ԼՈԿՈՄՈՏԻՎԱՅԻՆ ԼՈԽԱ- ՖՈՐՆԵՐ) ՅԵՎ ԱՎՏՈՍՈՊՆԵՐ

§ 127. ՔԵԲ-ԱՎԳԴԱՆՇԱՆՆԵՐԸ դրվում են լոկոմոտիվի բուղկայի մեջ և աղղանշանային ցուցմունքները ուղիս են անմիջապես մեքենավարին և նրա ողնականին: Բացի քեբ-ավգդանշաններից, մեքենավարի բուղկայի մեջ դրվում են նաև ձայնական աղղանշաններ:

§ 128. Ավտոստոպները պետք են ավտոմատիկորեն էանդնեցնեն գնացքը, յերբ նա անցնում է փակ կանաչաղուցացման կամ փակ հիմնական աղղանշանի մոտավայի դեպքում, յերբ մեքենավարը չի սեղմում դղաստության կոթը (րոկոյտք ճանաչություն): Մեքենավարի կողմից կոթի սեղմելը հաստատում է, վոր նա ըմբռնել և աղղանշանը և միջոցներ և ձեռք առել գնացքը կանդնեցնելու կամ նրա արագությունը նվազեցնելու համար:

### ՎԵՐԱՀԱՆՈՂԱԿԱՆ ՍԼԱՔԱՅԻՆ ԿՈՂԳԵՔՆԵՐ

§ 129. Վերահսկողական սլաքային կողաքները պետք են:

ա) Թույլ տան բանալին հանել. միմիայն սլաքի փակ միջոցին:

բ) Սլաքի փակումն ապահովել միմիայն այն դրությամբ, վորը ցույց է տրվում կողպեքից հանած բանալու վրա, յերբ սայրը քիզ կերպով կաւում է չըշանակային ռելսին:

§ 130. Աղղանշանային վերահսկողական կողպեքները չպետք են թույլ տան բանալին հանել այն դեպքում, յերբ աղղանշանը բաց է:

### ԱՎՏՈՄԱՏԻԿ ԳԾԱՆՑԱՅԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ

§ 131. Ավտոմատիկ գծանցային աղղարարումը կանդնույթի աղղանշան և տալիս տրամվայի գծերի և ավտո-լծաշարի կողմը այն դեպքում, յերբ գծանցին դնացք և մոտենում:

Աղղանշանը պետք է փակ դրության մեջ այնքան ժամանակ մնա, մինչեւ վոր դնացքը բոլորովին աղառի գծանցը:

### ԳԻԾՆ ԱՐԳԵԼՈՂ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ

§ 132. Գիծն արգելող պիտույքները (ցած ընկնող սանդալներ, արգելակային սանդալներ և այլն) չպետք են թույլ տան, վոր դնացքը կամ դնացքի կազմը դուրս դան այն գծերից, ուր նրանք դրված են, յերբ այդ գծերը պատսպարված են:

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՅԵՎ ՈՒՂԵԿԱ-  
ՊԱԿՑՄԱՆ ՍԱՐՔԱՐՈՒԽՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

§ 133. Կճռականապես արդելվում ե հեռազրական  
ազդարարների ղեկավարման, նորոգման հետ, ինչպես  
և գնացքների շարժման հարաբերությանը ծառայող  
ԿԿԿ (ԾԲՌ) և կապի ապարատների հետ կապ չունեցող  
անձանց մուտք այն շինության մեջ, ուր նրանք դր-  
ված են:

Այս ապարատներով իրավունք ունեն ոգտվել  
իրենց հերթապահության միջոցին այն աշխատավոր-  
ները, վորոնք դրա համար լիազորված են:

§ 134. Տարբեր տեսակի կախումներ իրավործող  
ազդարարման, կենտրոնացման և ուղեկապակցման ապա-  
րատները պետք ե փակված և պլոմբած լինեն: Նրանց  
բացումը թույլատրվում է միմիայն դրա համար լիա-  
զորված ազդարարման և կապի սպասի աշխատավոր-  
ներին, վորի մասին նրանք պարտավոր են այս սար-  
քավորումների ղենման մատյանի մեջ նշանակում կա-  
տարել:

§ 135. Ազդարարման, կենտրոնացման և ուղեկա-  
պակցման սարքավորումների կախման մեջ ժամանա-  
կավոր փոփոխություններ կարող են թույլատրվել  
միմիայն ազդարարման և կապի դիստանցիայի պետի  
թույլտվությամբ—նախորոք համաձայնեցնելով այդ՝  
շարժման սպասի բաժնի պետի հետ, բայց վոչ ավելի,  
քան մի որով, իսկ ավելի մեծ ժամկետով—միմիայն  
ճանապարհի պետի թույլտվությամբ:

§ 136. Արդելվում ե, առանց կայարանի հերթա-  
պահի դիտության ազդարարման, կենտրոնացման և ու-

ղեկապակցման պարագաների վերակառուցման, տե-  
ղափոխման, նորոգման և փոխարինման աշխատանք-  
ներ կատարել:

§ 137. Ազդարարման, կենտրոնացման և ուղեկա-  
պակցման գործող սարքավորումների փորձարկումը  
կատարվում է կայարանի հերթապահի համաձայնու-  
թյամբ և նրա հսկողությամբ:

§ 138. Ազդարարման և կապի դիստանցիայի պետը  
պարտավոր է ճիշտ դիտենալ իր դիստանցիայում բո-  
լոր ազդարարման, կենտրոնացման և կապակցման  
սարքավորումների դրությունը:

Սիստեմատիկորեն այդ գործիքները պետք ե ստու-  
գի, վոչ միայն իրեն հպատակվող աշխատավորների  
միջոցով, այլև և անձամբ, ապահովելով բոլոր ազդա-  
րարման սարքավորումների անխստիսն ու ստույգ աշ-  
խատանքը:

Ազդարարման և կապի դիստանցիայի պետը պար-  
տավոր է ուսուցել և ստուգել նաև այլ սպասների աշ-  
խատավորների և ազդարարման սարքավորումների հետ  
վարվելու կարողությունը, վորոնք սպասարկում են  
այս սարքավորումները: Պարտավոր է նաև սիստեմա-  
տիկորեն ստուգել նրանց դիտությունը:

§ 139. Կապի և ԿԿԿ-ի ելեկտրոսեխնիկը պետք է,  
վոչ պակաս քան տասնորյակում մի անգամ, ստուգի  
իր դժամասում լոկոմոտիվից ազդանշանների յերեսու-  
մը և պարբերաբար, ըջաղայելիս, ստուգի ազդարար-  
ման, կենտրոնացման և ուղեկապակցման սարքավո-  
րումների անխստիս վիճակը:

§ 140. Ազդարարման, կենտրոնացման և ուղեկա-  
պակցման սարքավորիչը (մոնտեր) պարտավոր է ստու-

գել աղդարարման, կենտրոնացման և ուղեկապահցման սարքավորումների, բոլոր ելեկտրական և մեխանիկական մասերի անխախտությունը, անհապաղ ուղղել բոլոր թերությունները՝ առանց ընդհատելու ապարատների աշխատանքը, իսկ այն գեղքում, յերբ ինքն անկարող և վերացնել վնասումները, անհապաղ պարտավոր և այդ մասին տեղեկացնել իր ուղեմասի ելեկտրոնեխանիքին:

## 7-ր դ գ լ ո ւ ի

### Կ Ա Պ Ը

§ 141. Կապի սարքավորումները պետք են ապահովեն զնացքների շարժման հետ կապ ունեցող աշխատավորների արագ հարաբերությունները, ինչպես և շուտափույթ կարգադրությունների հանձնումները:

§ 142. Ցերկաթդում կիրառվում են լարավոր և վոչ լարավոր կապի հետևյալ տեսակները.

ա) Գնացքային միջիայրանային, կայարանների միջև զնացքների շարժման մասին հարաբերությունների համար:

բ) Կայարանային, կայարանների մեջ հարաբերություն պահպանելու համար:

գ) Դիսպետչերային, զնացքային դիսպետչերի համար, իր ուղեմասի մեջ մտնող կայարանների հետ հարաբերություն պահպանելու համար: Դիսպետչերային կան զնացքային կապի հաղորդալարի մեջ թուլատը վում և մուծել միմիայն կայարանի հերթապահի, ոպե-

բատորների, դեպոյի, քարշային յեթնակայարանների և շողեշարժային տնտեսության բաժանմունքների հետ ուսխոսները:

դ) Ելեկտրա-քարշային, ելեկտրադիսպետչերների և քարշային յեթնակայարանների և կոնտակտային ցամցի պոստերի մեջ հարաբերություն պահպանելու համար:

յե) Գծա-ճանապարհային, (լինեյնո-պուտեայ) յերկաթդի աշխատավորների մեջ հարաբերություն պահպանելու այն հարցերի մասին, վորոնք վիրաբերում են դիմուցվածքները անխախտ պահելուն:

զ) Ճանապարհային, յերկաթդի աշխատավորների մյուս այլ տեսակի պաշտոնեական հարաբերությունների համար:

ե) Հեռավոր, ՀՃՓԿ-ի և ճանապարհների մեջ և ճանապարհները իրար մեջ հարաբերություն պահպանելու համար:

ը) Դիսպետչերական ներկայարանային, կայարանային դիսպետչերի և կայարանային աշխատավորների հարաբերության համար:

թ) Սլաքային կայարանի հերթապահի և ոլաքային պոստերի հարաբերության համար:

կ) Տեղական - կայարանային, ընդհանուր պաշտոնեական կապի համար:

§ 143. Վճռականապես արգելվում են զնացքային հեռախոսագրեր հազորդող կայարանային հեռախոսային կապի հաղորդալարերի մեջ մուծել այլ հեռախոսները:

§ 144. Սլաքային կապի ցանցը կառուցվում է կապի այլ տեսակներից առանձին և նրա հաղորդալարի

մեջ չի թույլատրվում մուծել վոչ մի ուրիշ հեռախոսային ապարատ :

8-ր դ գ լ ո ւ ի

## ԿԱՐԻ ՅԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԳԻԾԸ

§ 145. Կապի ուղային գծի և ազդարարման սարքավորումները համարվում են նեցուկները (ոյուները), հաղորդալարերը ամրացնելու պարագաներով՝ և նեցուկներից մեկուսված հաղորդալարերը:

§ 146. Ողային գծերի հաղորդալարերի ցածի կետի հետակավորությունը՝ գետնից կախման մեծադույն սլաքի գետքում՝ վաղուրդներում պետք է լինի 2,5 մետրից վոչ պակաս, կայարաններում՝ 3,0 մ-ից վոչ պակաս, գծանցներում՝ 4,5 մ-ից վոչ պակաս, իսկ յերկաթուղու գծերը հատելիս՝ ուղարկելի գլխիկից հաշված՝ 7,5 մ-ից վոչ պակաս:

§ 147. Կապի և ազդարարման գծերը վնասվելիս, նրանց վերանորոգումը կատարվում է հետեւյալ հաջորդականությամբ. 1) Նախ գծերի աղդարարման սարքավորումները՝ գնացքների յերթը կարգավորելու համար; 2) Գլխավոր (մագիստրալ) գծերը; 3) Կայարանային կապի գծերը:

§ 148. Կապի և ազդարարման սարքավորումներն ապահովում են հարևան խանդարող հոսանքից, կամ դիմք հատող ուժեղ հոսանքի վտանգավոր աղդեցությունից և ամպրոպային պարզումից (грозовые разряды) վորոշ պաշտպանությամբ:

9-ր դ գ լ ո ւ ի

## ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՑԱՆՑ

§ 149. Ելեկտրիֆիկացրած ուղեմասերում կոնտակտայի ցանցը ուղետք է ապահովի հոսանքի անընդունվածությունը, թե չարժման ամենամեծ արագ դության դեմքում և թե՝ մթնոլորտային ամեն տեսակ պայմաններում:

§ 150. Լարման միջին անկումը կոնտակտային ցանցում չարժման նորմալ գրաֆիկի գետքում՝ չուետք և գերազանցի նորմալ լարման 10-տոկոսից:

§ 151. Կոնտակտային հաղորդալարի կախման բարձրությունը՝ կայարանային ուղիների ուղևոր գըշիկից՝ 6250 մմ-ից ավելի ցածը չպետք է լինի, իսկ վաղուրդներում՝ 5750 մմ՝ ուղևոր գլխիկից:

§ 152. Ծայրադույն գծի առանցքից մինչև նեցուկի ներքին ափի տարածությունը 2750 մմ-ից սակաս չուետք է լինի վաղուրդների ուղիղ գծամասերում և 2450 մմ՝ կայարանի ուղիղ գծամասերում: Կոր գծամասերում այս տարածությունները մեծացնում են, համապատասխան շենքերի մերձեցման դարարիտների չափերի մեծացմանը: Կոնտակտային ցանցի և ազդանշանների նեցուկների փոխադարձ դասավորումը պետք է ապահովի վերջիններիս յերեւումը:

§ 153. Կոնտակտային ցանցի մետաղական նեցուկները և բոլոր մետաղային կոնտրուկցիաները (կամուրջներ, ուղանցքներ (путепрօքоды), լուսափորներ և այլն), վորոնք գետեղված են կոնտակտային ցանցի

մասերին անմիջապես մոտ, վորը զոնվում և մեծ լարաման տակ՝ անհրաժեշտ ե գետնել (զայմլիթ) :

§ 154. Յերկաթուղու գծերի ելեկտրիֆիկացման հետ միաժամանակ բոլոր ստորգետնյա կառուցվածքները, վորոնք դտնվում են այս գծերի շրջաններում (փաղաշարք—(трубопроводы), ջրմուղ, կաթելներ) յեզային—պետք ե պաշտպանված լինեն թափառող հոսանքների քայլայքումից :

§ 155. Քարշային յենթակայանների և ցանցի սարքավորումները—համապատասխան գործիքների միջնորդվաշտպանվում են կարճ միացման հոսանքներից և գերլարումից (перенапряжение) :

10-ր դ դ լ ո ւ ի

## ՅՈՒԱՅԻԾԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶՆՆՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՈՐՈԳՈՒՄԸ

### ՅԵՐԿԱՅԹԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶՆՆՈՒՄԸ

§ 156. Գնացքների անընդհատ և անվտանգ շարժումն ապահովելու համար, պետք ե սիստեմատիկորեն և մանրազնին դիտվեն սահմանված ժամկետների ընթացքում .

ա) Գիծն ու գծային կառուցումները կայարաններում և վաղուրդներում :

բ) Սլաքային փոխադրիչներն ու կկկ-ի (СЦБ) և կապի սարքավորումները կայարաններում և վաղուրդներում :

դ) Լոկոմոտիվային և վագոնային տնտեսության ըրամատուցման սարքավորումները :

է) Կոնտակտային ցանցի և քարշի յենթակայարանի սարքավորումները :

§ 157. Զննման ընթացքում ստուգվում և առանձին մասերի և գետալների մաշեցման չափն ու վիճակը և նրանց համապատասխան լինելը սահմանված չափերին ու թույլտվումին (ՃՈՎԸ) :

§ 158. Կկկ-ի, գծի, կապի, ելեկտրիֆիկացրած գծերի կոնտակտային ցանցի և զրամատուցման սարքավորման դիտումը և նրանց վիճակի պատասխանավությունն ընկնում ե այդ կառուցումներն անմիջականորեն սպասարկող աշխատավորների և համապատասխան բաժինների և դիտանցիաների պետերի վրա :

§ 159. Գծերի, սլաքային փոխադրիչների, կապի, աղղարարման, կենտրոնացման, ուղեկապակցման կոնտակտային ցանցի և աղղարարման պիտույքների դիտումը կայարաններում՝ բացի դրանից պետք ե կատարվի:

ա) Վոչ պակաս, քան ամիսու մի անգամ կայարանի պետից, ճանապարհի վարպետից, կկկ-ի և կապի ելեկտրոմեխանիկից, կենտրոնացման սարքավորողից և կոնտակտային ցանցի ավագ սարքավորողից կազմած կոմիսիայով՝ կայարանապետի նախադահությամբ:

բ) Յեռամոյակում վոչ պակաս, քան մի անգամ՝ շարժման սպասի բաժնի պետի նախադահությամբ՝ գծի դիտանցիայի, աղղարարման ու կապի և կայարանի պետերից բաղկացած կոմիսիայով:

§ 160. Այլ սպասների դեկավարման տակ գտնվող գծերի, սլաքային փոխադրիչների դիտումը կատարվում է նույն կարգով, նրանց ներկայացուցիչների ժամանակությամբ:

§ 161. Կայարանապետը պարտավոր է առեն անդամ կայարանը շրջադաշտելիս՝ կատարել նաև սլաքափոխադրիչի զնումը: Այսպիսի զնումները պետք են կատարեն նաև շարժման վերահսկիչներն և շարժման սպասի բաժինների պետերը, կայարանն այցելելիս:

§ 162. Անձնական և կոմիսիոն դիտումների հետեւ վավանքները և ձեռք առնված միջոցները մուծվում են՝ «դիմը, սլաքները, կապի, ազգարարման, կենտրոնացման և ուղեկապակցման սարքավորումները դիմավորությունում որպես մեջ», վորի մեջ նշանակվում են նաև խախտումներն վերացնելու ժամանակը:

§ 163. Վոչ պակաս, քան 3 ամիսը մի անգամ, չորսշաբթային տնտեսության բաժնի պետը կատարում է ջրամատուցման աղբյուրների, ջրհանոցի (водокачка), ջրասյունների (гидроколонки) ջրամբարյին շենքերի դիտում:

§ 164. Վոչ պակաս, քան ամիսը մի անգամ—վառդունային գծամասի պետը, ավտոարդելակները փորձելու համար, կատարում են կոմպրեսոր սարքավորումների (усталовки), հատուկ սեղմիչների զնում: Նույնպիսի զնում են կատարում նաև լծասարքի պարագաները և սեսորները փորձելու համար:

§ 165. Դիտումների հետեւանքը և խախտումները վերացնելու անհրաժեշտ ձեռնարկումները շոգեշարժային տնտեսության և վագոնային գծամասի պետերը մուծում են այս սարքավորումների զննմանը հատկաց-

ցլած որագրի մեջ: Նշանակվում են նաև խախտումների վերացման ժամանակն ու նշանակված ձեռնարկումների կատարումը:

### ՑԵՐԿՎԹՈՒՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒԽԾԸ

§ 166. Դժի, ազգարարման, կենտրոնացման, ուղեկապակցման և յերկաթուղային այլ կառուցվածքների, սարքավորումների նորոգումը, իբրև կանոն, պետք են կատարվի վոչ միայն ընդհատելով գնացքների յերթը, այլ և չկրծատելով նրանց արագությունը, ապահովելով նաև նրանց կատարյալ անվտանգությունը:

Միմիայն բացառիկ դեպքերում, յերբ կատարելիք աշխատանքը ծավալով մեծ և իր կատարման պաշտամններով չափազանց բարդ, կարող են թույլատրվել շարժման կարճատև ընդհատում և արագության սահմանափակում:

§ 167. Շարժման ընդհատումի և արագության սահմանափակման հետ կապված նորոգումը կատարվում է զնացքների ամենաքիչ ինտենսիվ յերթելեկման շրջանում, զնացքների յերթելեկման դրաֆիկի ամենափոքր խախտումով:

§ 168. Նորոգման աշխատանքների ամենաստույգ ժամկետը վորոշում է շարժման սպասի բաժնի պետը, համաձայնեցնելով այդ ժամկետը աշխատանքի դեկապարի հետ:

Աշխատանքի դեկապարն այդ աշխատանքը կատարելիս պարտավոր է մշտական կապ պահպանել զնացքային գիսպետչերի հետ:

§ 169. Այս դեպքերում, յերբ գնացքն ընթանալիս, անհրաժեշտ է ապահովել գնացքային ջոկատների հատուկ զգաստությունը և կանխաղղուշացնել նրանց կատարվող աշխատանքների և գծի, աղղաքարման, կոնտակտային ցանցի, ջրամատուցման փչացման մասին, գնացքներին տրվում է գրավոր կանխաղղուշացում:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵՂԻ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

#### § 170. Արգելվում ե.

- ա) Նախքան գնացքների յերթի համար աշխատանքի վտանգավոր տեղը աղղանշաններով պատսպարեռում՝ դիմել աշխատանքի;
- բ) Հանել աշխատանքի տեղը պատսպարող աղղանշանները, նախքան աշխատանքի ավարտումն ու գծի դրության ստուգելը:

Գնացքների յերթի համար վտանգավոր աշխատանքների կատարման տեղերը պետք ե աղղանշաններով պատսպարվեն յերկու կողմից ևս ճանապարհի ընթուղի և թե յերկուղի գծամասերում:

Կանգույթ պահանջող աշխատանքի կատարման տեղերը պատսպարվում են հետեւյալ կերպով: Կարմիր աղղանշանը դրվում է հենց աշխատանքի տեղում, Աշխատանքի կատարման տեղից 200 մ. հեռու, 2 կողմից ևս դրվում են նույնպես կարմիր աղղանշաններ: Այս աղղանշաններից 800 մ. հեռու, դրվում են Յ-ական ճայթոփիկ (պետարձ) և առաջին ճայթոփիկից 200 մ. հեռու, աշխատանքի տեղի ուղղությամբ, զետեղում են

արագություն նվազեցնող ազդանշաններ: Նվազեցրած արագությամբ՝ գնացքների յերթ պահանջող աշխատանքի տեղերը պատսպարվում են յերկու կողմից ևս, 600 մ. հեռավորությամբ՝ արագություն նվազեցնող աղղանշաններով:

§ 171. Գծային աշխատանքները պատսպարող փոխադրական աղղանշանների տնկման և պահպանման համար՝ աշխատանքի դեկավարները նշանակում են հատուկ անձանց, վորոնք տվել են վորոշված ստուգում և վորոնք իրենց գլխի ծածկութով տարրերվում են յերկաթզգի տրանսպորտի աշխատավորների համար ընդունված գլխի ծածկութից:

§ 172. Լայնարձակ Փրոնտով գծային աշխատանք կատարելիս, աշխատանքի դեկավարը պարտավոր եւ աշխատանքի տեղը պատսպարող աղղանշանների մոտ նշանակված աշխատավորների հետ—պահպանել հեռախոսային կապ:

§ 173. Արգելվում է կայարանոյին գծերում գնացքների անվտանգ շարժման հետ կապ ունեցող աշխատանքներ և մանյուլյային տեղաշարժումներ կատարել՝ առանց կայարանի հերթապահի թույլտվության:

### ՎԱԶՈՒՐԻՆԵՐԻ (ΠΕΡΕΓΟΗ) ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

§ 174. Վազուրդի վակումը աշխատանք կատարելու համար միուղի գծամասում, — կամ մի կամ յերկու գծի փակումն ևս յերկուղի գծամասում՝ կարող եթույլատրութել միմիայն ճանապարհի պետի կարգադրությամբ:

## ՅԵՐԱԿԱՆՈՂԻ բաժին

ՇԱՐԺԱԿԱԶՄՆ ՈՒ  
ՆՐԱ ՊԱՀՊԱԽՈՒՆ

Գծի այնպիսի փակում, վորի ընթացքում անհրաժեշտ և դնացքները բաց թողնել տվյալ ճանապարհի այլ գծամասերի կամ այլ ճանապարհով շրջապտույտ՝ թույլատրվում և ծայրահեղ բացառիկ դեպքերում՝ չձժկ գծի և շարժման կենտրոնական վարչությունների պետերի թույլտվությամբ:

§ 175. Շարժման Սպասի Բաժնի պետը, ճանապարհի պետի կարգադրության հիման վրա, միուղի գծարմասերում վազուրդը փակելու, իսկ յերկուղի գծամասերում մեկ կամ յերկու դիմում ևս փակելու նախազդուչացումը հայտնում և համապատասխան աշխատավորներին, փակումից վոչ ուշ, քան մի որ առաջ:

Վազուրդի փակումն ու բացումը կատարվում է դնացքային դիմապետչերի հրամանով՝ աշխատանքի ոկորին և աշխատանքի վերջին:

§ 176. Աշխատանքի դեկալարով մինչև դիմապետչերից գեծը փակելու հրամանի պատճեն չստանա, ինչպես և մինչև աշխատանքի տեղը ազդանշաններով չափառություն, աշխատանքի դեկալարը իրավունք չունի դիմել աշխատանքի:

§ 177. Վազուրդի բացումը կատարվում է միմիայն աշխատանքի դեկալարով՝ աշխատանքն ավարտելու և դիմում անխախտ վիճակում լինելու մասին՝ դրավոր հաղորդագրում, հեռազերի կամ հեռախոսադիր ստանալուց հետո:

§ 178. Վազուրդը սահմանափակող յերկու կայարանից ևս փակվող գեծը զուրու զալու յելքերը պետք ե պատսպարժած լինեն սլաքավարների կողմից պաշտպանվող կանոնութիւն աղդանշաններով:

1-ի և դ և ու իւ

ԼՈԿՈՄՈՏԻՎՆԵՐ

ԸՆԴԱՆՈՒԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

§ 181. Լոկոմոտիվը յերկաթուղու տրանսպորտի հիմնական շարժիչ ույժն և, վորն ապահովում է դնացքների յերթեեկումը դրաֆիկով:

§ 182. Լոկոմոտիվներն բաժանվում են շողեշարժերի, ելեկտրաշարժերի և ջերմաշարժերի (տեղայութեա), էսկ աշխատանքի տեսակով՝ ճամբորդական, ապրանքային և մանյովրային:

§ 183. Նոր կառուցված լոկոմոտիվները մինչեւ ձանապարհին շահագործման հանձնելը, պետք է փորձարկվեն և ընդունվեն մատակարարող գործարանից պետով:

§ 184. Յուրաքանչյուր լոկոմոտիվ պետք է ունենա տեխնիկական անցադիր, վորի մեջ մուծվում են. կառուցման և շահագործմանը հանձնվելու թիվը, վաղքը (քրօնությունը) հորինվածքային փոփոխությունները, չողեկաթսայի փոխելը (չողեշարժի մեջ), առաջնային շարժիչի (ջերմաշարժի կամ մոտոշարժի՝ մեջ) և ելեկտրական շարժական շարժակազմի մեջ քարշային շարժիչների և ոժանդակ մեքենաների փոխումը, ինչպես և պարբերական նորոգման ավայաները:

§ 185. Ամեն մի լոկոմոտիվ պետք է ունենա տարբերող նշաններ և հետեւյալ մակադրումները՝ պետական դրոշմ (գերե), ՀՃՇԿ-ի նշանը, (ԻՐՈՍ) կր ճանապարհի վերագրման սկզբնատարերը (ասուալ), կառուցման տեղն ու ժամանակը, շարժակարգն (սերիա) ու համարը, հորինվածքային արագությունը, վորոշված նորոգումաների տեսակների կատարման տեղն ու ժամանակը, ինչպես և կաթսայի (չողեշարժների մեջ) վերահսկման պիտույքների և ավազանների զննման մասին աղյուսակներ և մակադրումներ:

Տեսակների վրա պետք է նշանակված լինեն—շարժակարգը և համարը, վերագրման ճանապարհի սկզբնատարերը, ջրի գուռի համարը, (նաև) ծավալը խորա-

նարդ մետրերով, վառելիքի տարաղությունը տոններով:

### ՇՈԳԵՇԱՐԺԱՎԻՆ ԿԱԹՍԱՎՆԵՐ

§ 186. Յուրաքանչյուր շողեշարժի կաթսա պետք է ունենա վոչ պակաս.

ա) Քան յերկու ջուր մատուցելու անկախ պիտույքներ (քրիօն), վորոնցից յուրաքանչյուրը պետք է ապահովի ջրի լիակատար մատուցումը՝ կաթսայի առավելագույն աշխատանքի միջոցին:

բ) Յերկու ապահովիչ փական, այնպիսի հարմարանքներով, վորոնք չեն կարող թույլ տալ փականի վրայի բեռնավորման փոփոխություն:

գ) Կաթսայի մեջ ջրի մակարդակը ցույց տվող յերկու պիտույք (քրիօն) մեկը նրանցից—յերեք ջրափորձիչ ծորակների ձեռվ, իսկ մյուսը, իբրև ջրաչափ ապակիներ:

դ) Մի մանումետր, կաթսայի ճնշումը վորոշելու համար: Մանումետրները պետք է ունենան վերահսկիչ սլաք, իսկ ցիֆերբլատի վրա կաթսայի մեջ չոգու առմենամեծ թույլատրելի ճնշումը վորոշող կարմիր գլուխ, Մանումետրները պետք է սլարբերորերն ստուգվեն, ըստ վորում՝ նրանց վրա ցույց ե տրվում զննման թիվը:

յ) Վոչ պակաս քան 2 ապահովիչ խցան, վորոնք պետք է դրված լինեն հնոցի առաստաղի առջեկի ու հետեւյի մասում:

զ) Կաթսայի ճակատի պատին, ջրաչափ ապակում մերձ, պետք է ամրացրած լինի փիչերով (պարպամ) մետաղի թիթեղ՝ վորի վրա պետք է լինի «կաթսայի

մեջ ամենացածր, մակարդակը» մակաղբություն՝ իր ցուցիչով։ Թիթեղը գրվում է ջրից վողողվաղ հնոցի առաստաղի՝ ամենաբարձր կողից 100 մմ-ից վոչ պակաս բարձրության վրա։

Մանմետքերն ու ապահովիչ փակութները պետք են պլոմբած լինեն, ապահովիչ խցանները հալույթի վերին մակերեսի վրա պետք են ունենան խարան (քլեյմ), վորը ցույց են տալիս նրանց զննման տեղն ու ժամանակը։

§ 187. Յուրաքանչյուր շողեշարժի կաթսա պետք են սահմանված ժամկետների ընթացքում փորձարկվի։

### Ա Ն Վ Ա Զ Ո Ւ Յ Ց

§ 188. Յուրաքանչյուր անվագույիլ պետք են հաշմապատճանի «Անվագույիլը քննելու, ձևավորելու և նորոգելու կանոններին» և պետք են սունու ծայրին ունենա իր լիակատար զննման տեղի և ժամանակի մասին խարանը (քլեյմ)։

Բացի դրանից սունիների, ավահանդների և անվային կենտրոնների այն տեղերում, վորոնք կանխատեսնված են համապատճան ստանդարտների (ՕԾԵ-երի) դրումի կանոններով, պետք են գտնվեն սպատրաստող դորձարանի դրոշմները, ձուլման համարները, պատրաստման թիվն ու կարգային համարը։

§ 189. Կալանդների ներքին կողերի միջի տուրած ծույթյունը պետք է լինի 1440 մմ։ Մեծացման կամ նվազեցման շեղումներն թույլատրվում են, բայց 3 մմ-ից վոչ ավելի։

Շողեշարժերի դոյությունը ունեցող տիպերի մեջ

այս չափերի շեղումները պետք են համապատասխանեն հաստատված նախադերին։ Կալանդների լայնությունը պետք են համապատասխանի հաստատված ալբոմակին չափերին։

§ 190. Կալանդների նորմալ մաշը (պրօբաման չափագծով հաշված (առ որու կատանա), չպետք են ավելի լինի—ճամբորդական զնացքների լոկոմոտիվներինը՝ 5 մմ-ից, ապրանքատարինը՝ 6 մմ-ից, մանյովայինը՝ 7 մմ-ից, իսկ տեղերներինը՝ 8 մմ-ից ։

§ 191. Արգելվում են զնացքների համար դուրս թողնել այնպիսի լոկոմոտիվներ, վորոնք ունեն անվազույթի մեջ հետեւյալ թերությունները։

ա) Սոնու թուլացումը անվի գունտի մեջ (Յ ԾՄ-ունք)։

բ) Սոնու մեջ թեկուզ մի հատ ընդլայնական ճաք։

շ) Սոնու վրա յերկայնական ճաք կամ թաղանթ (պլեն), վորոնց յերկարությունը 25 մմ-ից ավելի յե։

դ) Սոնու վրա արգելակային քաշերի շփումից առաջ յեկած կերպածքներ 4 մմ-ից ավելի խորությամբ։

յե) ձափեր, անվի դունդի վրա։

զ) Յերբ անվի դողի (օօօձ) սեկտորներից մեկուտ կա յերկու ճաք։

ե) Յերբ անվի ճաղի մեջ կա ճաք, և միենույն ժամանակ ճաղին կից յերկու սեկտորների մեջ ճափեր։

ը) Շողեշարժային կալանդների վրա 7 մմ-ից բարձրը, իսկ տեղերային կալանդների վրա 9 մմ-ից բարձր մաշցում։

թ) Յերկայնական և ընդլայնական ճաքեր՝ անվի կալանդների մեջ։

ժ) Յերբ չողեշարժի կալանդների կատարի հաստությունը 25 մմ-ից պակաս և կամ 33 մմ-ից մեծ եւ կատարի գաղաթից 20 մմ տարածությամբ հաշվելիս :

ի) Յերբ տեսդերի կալանդների կատարների հաստությունը 22 մմ-ից պակաս և—կամ 35 մմ-ից ավելի՝ յէ՝ նրանց հաստությունը կատարի գաղաթից 18 մմ տարածությամբ չափելիս :

լ) Յերբ կալանդների ներքին կողերի միջի տարածության չեղումը դեպի մեծացում, կամ դեպի փոքրացում, ըստ ալբոմային չափերի, 3 մմ-ից ավելի՝ յէ :

իմ) Յերբ անիվների գլորման մակերեսը 1 մմ-ից ավելի՝ տեղական խորխոլներ (վայօնիք) ունի:

## ԼՈԿՈՄՈՏԻՎՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՍՊԱՍՄՐԿՈՒՄԸ

§ 192. Լոկոմոտիվի զննումը կատարվում է ինչպես դեպոյում, նույնաես և կայարանային գծերում:

§. 193. Լոկոմոտիվները զննելիս՝ ստուգվում են:

ա) Մասերի և դետալների մաշեցումը և նրանց համապատասխան լինելը շարժման անվտանգությունը պահպանող վրոշված չափերին:

բ) Վերահսկման և չափիչ պիտույքների (приборы) արդելակային սարքավորումների անհսական աշխատանքները:

§ 194. Արդելվում է դեպոյից գնացքների համար թողնել հավելյալ խախտումներով չողեշարժեր.

ա) Յերբ չողեշարժի սուլիչը փչացած է:

բ) Յերբ ողացին ծծիչները խախտված են, վորոնք չեն ապահովում ողի նորմալ մղումը դլամավոր ցանցը

և կամ խախտված են չողեշարժի վրայի ավտոմատիկ կամ ձեռքի արդելակները:

դ) Յերբ խախտված է թեկուղ մի սնուցող պիտույք:

դ) Յերբ ապահովիչ փակույթները խախտված են :

յ) Յերբ բացակայում են կամ խախտված են ջրաշափական պիտույքներն ու ջրափորձական ծորակները :

զ) Յերբ մանումետրները խախտված են և կամ տալիս են անձիշտ ցուցմունք :

ե) Յերբ ավաղատուիերը խախտված են :

ը) Յերբ դյուրահաւ խցանները տալիս են կաթոց :

թ) Յերբ յուղիչ ապարատը խախտված է :

զ) Յերբ ձեղի սոնրարձը (подшипник) չարփված է և կամ հալված :

յ) Յերբ չողեշարժի ձեղի մեջ կան ծոռում կամ ձագ:

լ) Յերբ կան մխոցային կամ սողնակի բեկված ողեր :

ի) Յերբ ռեսորների կախչների (подвески) մեջ կան ճաք և հերձում (надрыв) :

ծ) Յերբ լուսավորման պիտույքները (приборы) խախտված են:

կ) Յերբ սոնու սոնրարձը (подшипник) կոտրված և կամ հալված է:

և) Յերբ բուքսի տուփերը ունեն ճագ:

ձ) Յերբ անդուրվարի (экипаж) և մեքենայի ըրջանակի բուլոր միացումներում հեղույսները թուլացած են

§ 195. Լոկոմոտիվի նորոգման պլանը կազմում է մանապարհի չողեշարժային սպասը—ՀՃԿ-ից առաջարկած տեխնոլոգիական պրոցեսներին և վազուրթի

(пробег) նորմերին համապատասխան, և հաստառավում և ճանապարհի պետի կողմից:

§ 196. Դեպոյիք բարձական (ողեմօշտի) նորոգումից դուրս յեկած լոկոմոտիվը պետք է անձամբ ընդունի դեպոյիք պետը կամ նրա տեղակալը և առաջին խել յերթի միջոցին նրանցից վորեւ մեկը պետք եւ ուղեկցի մի կամ յերկու վազուրդ, նորոգման վորակը ստուչելու համար: Հիմնական նորոգումից դուրս յերկու լոկոմոտիվն ընդունվում եւ չողեշարժային սպասի կամ եւեկորիքի կայցման բաժնի աեսչի կողմից:

§ 197. Կատարած նորոգման վորակի և լոկոմոտիվների անվատնող շարժման պատասխանառությունը ըկնում է, թե անմիջականորեն դիտումն ու նորոգումը իրավործող աշխատավորների և թե դեպոյի ու դորձարանների վարպետների և սեւերի վրա:

§ 198. Արգելվում եւ լոկոմոտիվը թողնել բանող վիճակում դեպոյիք զծերում առանց այն անձի հսկողության, վորը ծանոթ է նրա խնամքին և կարող է նրան կանգնեցնել:

§ 199. Ամեն մի լոկոմոտիվ, վորն աշխատում է քերազդարարումներով կամ ավտոստոսաներով կահավորված ուղեմասերում, գնացքին հանձնելուց առաջ, պետք եւ գնալի հերթապահի կողմից վերահսկման էւտում, վորը ստուգում եւ համապատասխան պիտույքների աշխատանքը:

§ 200. Փայտե կամ ածխելվառելիքով ջեռուցվող ամեն մի չողեշարժի վրա պետք եւ գտնվեն լիովին անխախտ կայծ վորող կամ կայծ մարող պիտույքներ:

§ 201. Լոկոմոտիվի սպասարկումը կատարում էն մշտակես նրանց կցված ջոկատները, վորոնք բաղկա-

ցած են յերկուական վոչ պակաս անձից, մեքենավարից և նրա ողնականից:

§ 202. Ելեկտրական քարշի դեպում, ջոկատը էաբող և կցվել մի քանի լոկոմոտիվների կամ մի կարենից դեկավարով մշտակես միացած մի քանի սեկցիաների:

Մոտորվագոնային սեկցիայի սպասարկումը էաբող և կատարել նաև մի մեքենավար, յեթե միայն նա ունի ավտոմատիկ կանգնեցման (օտահօեռա) պարագաներ այն դեպքի համար, յերբ մեքենավարը հանկարծակի կորցնում եւ զնացքն վարելու ունակությունը:

§ 203. Եերբ լոկոմոտիվը շարժվում է դեպոյի գծերով, ուր կատարվում եւ պատրաստավորումը, նրա վրա կարող եւ գտնվել լոկոմոտիվը վարելու իրավունքը ունեցող մի անձն: Զերծատաշարժի վրա պետք եւ գտնվի 2-ից վոչ պակաս անձն:

§ 204. Մոտոշարժը կայարանային գծերում աշխատելիս, թույլ եւ տրվում, վոր նա սպասարկվի մի մեքենավարի կողմից:

§ 205. Լոկոմոտիվի մեքենավարը պարտավոր է լավ իմանալ տեխնիկական շահագործման կանոնները, աղբարարման հրահանուը, պաշտոնեական հրահանդը, լոկոմոտիվի հորինվածքը, իր ուղեմասի պրոֆիլը, գնացքների շարժման վրաֆիկն ու չվացուցակը: Դեպի գնացքը գիմելուց առաջ մեքենավարը պետք է լոկոմոտիվը զննի և ընդունի դեպոյում, ստուգի բոլոր մեխանիզմների անխախտությունը, մանավանդ արդելակների և ավաղատութիւնը աշխատանքը:

Գնացքը վարելիս՝ մեքենավարն ու նրա ողնականը պարտավոր են զղաստորեն հետելել աղղանշաններ:

ըին և գծային նշաններին։ Մեքենավարը պարտավոր ե ժամանակին արդելակել և բաց թողնել արդելակները, դնացքը վարել, կանգնեցնել և տեղաշարժել սահուն կերպով և առանց խզումների (օքրեա) շոգեշարժային ջոկատները պետք ե չոգու հանույթը (շատ) կատարեն տնտեսորեն և առավելադույն չափով, պահպանելով վառելիքի այրման կանոնավոր ռեժիմ, վորակեսղի հնարակութիւնը լինի լոկոմոտիվի կորովը (мошность) ամենամեծ չափով ոգտագործել։

Մեքենավարը պարտավոր ե ժամանակին առաջովել դնացքների անվտանգ շարժումը վաղուրդով, ճշշտորեն պահպանել շարժման գրաֆիկը։

## Հ-Պ Դ Գ Լ Ո Ւ Խ

### ՎԱԳՈՆՆԵՐ

ՎԱԳՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԱԾՈՂ ԲՆԴՀԱՆՈՒՐ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ.

§ 206. Յերկաթու վագոնների սրահը բաղկացած է ճամբորդական և ապրանքային վագոններից։ Ճամբորդական վագոնների սրահը բաղկացած է ուղևորների փոխադրող վագոններից, վագոն-ճաշարաններից, փոստային, բաղաժի և հատուկ վագոններից։

Ապրանքային վագոնների սրահը բաղկացած է դոնդուներից, խոսկերներից, պլատֆորմներից, ծածկով վի վագոններից, ցիստերներից, իզոտերմիկ և հատուկ նշանակման վագոններից։

§ 207. Վագոնները յերթի յևն թույլատրվում միայն գննումից և գնացքի մեջ մուծելու համար պիտանի ճանաչվելուց հետո։

§ 208. Վագոնի բոլոր մասերը պետք ե համապատասխանեն նախադաշտին չափերին, պահպանելով վորոշված թույլարկումները (ձուցել)։

§ 209. Բուժերի առանցքի կամ լծառարքի քարշիքարձրությունը ուղևի գլխիկից ապրանքային վագոնների համար՝ պետք ե լինի ամենափոքր չափը 920 մմ, ամենամեծ չափը՝ 1100 մմ, ճամբորդական վագոնների համար ամենափոքր չափը 1000 մմ, ամենամեծ չափը 1115 մմ։

Բուժերների կենտրոնների միջի հորիզոնական տարածությունը պետք ե լինի 1782 մմ։

§ 210. Կցարկողի անվտանգ աշխատանքի համար՝  
ա) Բուժերային ձողի ափսեյի և ավտոկցման ամենամեծ դուրս ընկած կողային մակերեսի միջի տարածությունը 350 մմ-ից պակաս չ պետք ե լինի, յուկ բուժերային ձողի ափսեյի և պտուտակավոր ձգանի կողային մակարդակի մեջ՝ 500 մմ-ից վոչ պակաս։

բ) Այն ամենափոքր տարածությունը, վոր գըտնումը ե լիովին ներս մղած բուժերի զարկային մակարդակից կամ ավտոկցումի կցման առանցքից մինչեւ բուժերի գլցունը պետք ե լինի 300 մմ-ից վոչ պակաս։

գ) Վագոնի ճակատի պատը, վորը գտնվում ե բուժերի և կցման պլատույքի մեջ, ուղևի գլխիկց 1900 մմ բարձրության վրա՝ չ պետք ե ունենա վորելու դուրս ցցված առաջկա։

§ 211. Լծասայլ չունեցող վաղոնների անվաղույթ-կերի ծայրադույն սոնիների միջի տարածությունը 3800 մմ-ից փոքր չպետք է լինի:

§ 212. Բոլոր ճամբորդական վաղոնները յերկու ծայրից, իսկ ապրանքային վաղոնները, սրահակների ձեռքի արդելակների կողմից պետք է ունենան կողքի աղջանչանային լապտերների բարձակներ, ճակատի պատերին՝ պոչի բուֆերային լապտերների համար՝ դամեր: Այս բոլոր դետալների համար բարձակներն ու գամերը պետք է համապատասխանեն շարժակազմի համար դոյություն ունեցող զարարիտին:

§ 213. Ճամբորդական վաղոնները պետք է սարքավորված լինեն ջեռությամբ, չողմախաղի (ՎԵՐՏԱԼԱՎԱՐ), ելեկտրական լուսավորությամբ սարքավորումներով, մոմային լուսավորման պիտույքներով և կրակամարիչներով:

Գաղային, նախին լուսավորման և զաղե խոհանությունների դորձադրումը արդելվում է:

§ 214. Ճամբորդների վաղոնները պետք է կահավորված լինեն լվաղարանների, ունիտաղների, վողողելու, զոլորշու և ջրային տաքացման պիտույքները ևնելու համար ջրի պաշարի ավաղաններով, իսկ հեռավոր յերթի դնացքներում, բացի սրանցից, վաղոնները պետք է կահավորված լինեն նաև սանիտարա-առողջապահական հարմարանքներով և ուղեկորներին էլենցաղա-կուլտուրական սպասարկման ու բժշկական առաջին ողնության համար անհրաժեշտ իրերով:

§ 215. Ծածկովի ապրանքային վաղոնները, բացառությամբ հատուկ վաղոնների, պետք եւ ունենան նիոթվող (զավակնե) դռներ, իսկ իրանի (ԿՅՅՕՅ) վերին մասում 4-ից վոչ պակաս խառակ (լուս): Ծածկովի ապրանքային վաղոնները պետք եւ ունենան չհանդող հարմարանքներ, ձիյերի յեկ խոշոր կենդանիների փոխազդրումը սարքավորելու համար:

§ 216. Բոլոր վաղոնները պետք եւ ունենան 4.5. տեղակ 4 նշաններն ու մակարդումներն—պետական գրոշմը, ՀՅԺԿ նշանները, վերադրման ճամապարհի անունը, կառուցման տեղն ու ժամանակը, բուժուերի ու արդելակների քննման և պարբերական նորոգման տեղն ու ժամանակը, վաղոնի համարը, դատարկ վաղոնի կշիռը, ապրանքային վաղոնների վրա ամբարձիկ ույժը, իսկ ճամբորդական վաղոնների վրա փափուկ, կոշտ տեղերի թիվը և այլն:

### Ա Ն Վ Ա Զ Ո Ւ Յ Կ

§ 217. Յուրաքանչյուր անվաղույթի պետք եւ բարարի «Անվաղույթերի նորոգման, ձեփավորման յեկ զննման կանոններին» և պարանոցների ծայրերին պետք եւ ունենա իր լիակատար զննման տեղի և ժամանակի խարանը (ՌԵԼՅՄ):

Բացի այդ, համապատասխան ստանդարտների (ՕԾ) դրոշի կանոններով սոնիների, կալանդների յեկ անիշների վրա նախատեսված տեղերում դրոշմի կանոններով դրվում են պատրաստող, զործարանի խարանները, ձուլման համար, պատրաստման թիվը և կարգահամարը:

§ 218. Վճռականորեն արգելվում է վաղոնների

տակլը ձգել այնպիսի անվազույթ, վոր ունի հետեւյալ  
թերությունները:

ա) Սոնու վորեւե տեղում ընդլայնական ճափեր:

բ) Սոնու նախագունակի վրա չնչին քերում (րիօօք):

գ) Սոնու վրա մշակված տեղեր՝ 2,5 մմ և ավելի  
խորությամբ:

դ) Ամբողջաձույլ անիվների դողերի (օօօդ) կամ  
կալանդների վրա ճափեր, գլորման մակերեսին խեցին-  
չեր (ռազօնին) կամ թուլացած կալանդներ:

յԵ) Անիվների սկավառակների և կենտրոնների  
մեջ ողակավոր ճեղքեր:

զ) Անիվների գունդերի և կենտրոնների մեջ  
(в ступնացական) ճեղքեր և կամ նրանց թուլացումը  
սոնու վրա:

ե) Ճեղքեր մի ճաղի հիմքում կամ յերկու ճաղի  
մեջտեղում և կամ դողի (օօօդ) մոտերքում:

ը) Անվի գլորման մակերեսին տեղական կեղեր  
(ռազօնին) 3 մմ. խորությամբ:

թ) Վաղոնի տակին ամրացնելիք յուրաքանչյուր  
անվաղույկի պարանոցը պետք է ստուդի դեֆեկտո-  
սկոպով:

§ 219. Արգելվում է դնացքի կազմի մեջ մուծել  
այսպիսի վաղոններ, վորոնք գլորման շրջադի վրա  
ունեն մաշեցում (պրօքատ):

ա) Յեթե այդ մաշեցումը ապրանքային սրահի  
հեռավոր յերթի վաղոնների մեջ 7 մմ-ից ավելի յե:

բ) Յեթե այդ մաշեցումը ճամբորդական սրահի  
տեղական յերթի վաղոնների մեջ 8 մմ-ից ավելի յե:

գ) Յեթե այդ մաշեցումը ապրանքային սրահի  
վաղոնների մեջ 9 մմ-ից ավելի յե:

Վերը ցույց տվածից բարձր մաշեցումը ունեցող  
վաղոնները պետք է անջատվեն զնացքից:

§ 220. Արգելվում է դնացքի մեջ մուծել այնպի-  
սի վաղոններ, վորոնք կատարի հաստությունը դա-  
շաթից հաշված՝ 18 մմ տարածության վրա.

ա) Պողպատե անիվներինը 33 մմ-ից ավելի յե  
կամ 22 մմ-ից փոքր ե:

բ) Գրիֆֆի անիվներինը՝ 36 մմ-ից ավելի յե  
կամ 25 մմ-ից փոքր ե:

Արգելվում է դնացքների կազմի մեջ մուծել (դլոր-  
ման շրջադառվ) կալանդի հետեւյալ հաստությամբ  
վաղոններ (մաշվածքը դուրս դալով):

Ճամբորդական վաղոններում.

ա) Տրանսիլիքական հաղորդակցության վաղոնն-  
եր, յերբ կալանդի հաստությունը 45 մմ ից փոքր ե:

բ) Հեռավոր յերթի յերբ կալանդի հաստությու-  
նը 35 մմ-ից փոքր:

շ) Տեղական և մերձքաղաքային վաղոններ,  
յերբ կալանդի հաստությունը 30 մմ-ից փոքր ե:

Ապրանքային վաղոնների մեջ.

ա) յերբ վաղոնը յերկառնի յե և կալանդի հաս-  
տությունը 19 մմ-ից փոքր ե.

բ) յերբ վաղոնը քառասունի յե, կալանդի հաստու-  
թյունը 22 մմ-ից փոքր ե:

շ) յերբ ապրանքային վաղոնները ընթանում են  
ճամբորդական վաղոններում և կալանդի հաստու-  
թյունը 30 մմ-ից փոքր ե:

Յեթե դնացքների մեջ յերելան են բերվում այն-  
պիսի վաղոններ, վորոնք կատարի և կալանդի հաս-  
տությունը վերը ցույց տված նորմերից փոքր ե  
ապա այդ վաղոնները անջատվում են զնացքից:

§ 221. Անվազույկի զննումն ու նորոգումը  
պետք է կատարվել:

ա) նորոգման այն կետերում, վորոնք ՀՃՇ-ից  
այդ աշխատանքներն կատարելու թույլտվություն  
ունեն.

բ) կամ այն անձինք, վորոնք համապատասխան  
ստուգում տալուց հետո իրավունք են ստացել այդ  
աշխատանքները կատարել:

§ 222. Անիվների կալանդների կամ դողերի ներ-  
քին կողերի միջի տարածությունը պետք է լինի՝

ա) պողպատե անիվների մեջ 1440 մմ, այս կամ  
այն կողմը 3 մմ-ից վոչ ավել չեղումով.

բ) թուչե անիվների մեջ—1437 մմ, դեպի փոքր  
կողմը, 3 մմ, դեպի մեծ կողմը, 4 մմ. չեղումով:

ՎԱՐՈՆՆԵՐԻ ԶՆՆՈՒՄՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ.

§ 223. Վազոնների զննումն ու նորոգումը կա-  
տարվում են դործարաններում, վազոնների դեպոնե-  
րում, վազոններ նորոգող կետերում, տեխնիկական  
զննման կայարաններում և մասսայական բնոնավոր-  
ման ու դատարկման կետերում:

§ 224. Վազոնները զննելիս՝ ստուգում են.  
ա) առանձին մասերի և գետայլների վիճակը ու  
մաշվածը և նրանց համապատասխան լինելը ան-  
վտանդ չարժում ապահովող չափերին:

բ) արդելակային կցիչ և զարկային պարագանե-  
րի ներկայությունն ու անխափան աշխատանքը:

§ 225. Արդելվում է դնացքների մեջ դնել այն-  
պիսի վազոններ, վորոնք ունեն.

ա) վիճակում պահանջող և խախտված անվազույկ.

բ) Դայմոնդի խախտված սայլակ, գոտիների,  
ուսորների վերի և ուսորների ներքել դլոնդերի  
(նրա), բուքսիրի ջարդվածք:

շ) բուքսային թաթերի ջարդվածք կամ ծոռմ.

դ) սեսրային բարձակների (կրոնտեյն) ջարդ-  
վածք.

յ) խախտված դիմիներ կամ վախում պահան-  
ջող ավտոկցման զարկականիչ ապարատներ.

զ) միջանցիկ (սեբօզոյ) լծառարքի կարթերի խախ-  
տում.

հ) Շվելլերային ընդլայնական և կամ բուֆերա-  
յին զրոնների խախտվածք, վորոնք չեն կարող վե-  
րացնվել դնացքի կանգնութիւն միջոցին.

ը) վիճարինում պահանջող ընդլայնական ան-  
կառնագծային և ապարատային խախտված դլոն-  
ներ.

ժ) մետաղական կողվածքով կրան (ԿՅՅԲ) ունե-  
ցող վազոնների մույթերի (ՇՏՈՒ) միացման խախ-  
տում.

թ) վիճարինում պահանջող խախտված մույթեր  
(ՇՏՈՒ) և զննի հետահներ:

ի) վիճարինում պահանջող առաստաղային ա-  
զեղների կամ Փրամուզների ջարդվածք.

լ) բնոնած վազոնների կողվածքի կամ հասակի  
խախտակների խախտում, յեթե բնուը կարող է թշնդե-  
լուց փչանալ, ճանապարհին ընկնել և կամ հափլչ-  
ապակիել.

լլ) զննուլուների, խոպերների հատակի, խարակնե-  
րի (մօքի) կողպիչ մեխանիզմի հողակապերի խախ-

տում, վորը գնացքի կանգնույթի միջոցին չեն կարող վերացնվել:

Ճ) ցիստերնի վորի տակի ձողերի ջարդվածք.

Ղ) ցիստերնի կաթսայի (գուռերի) սահք (ԸՋՎԻՑ):

Հ) ցիստերնի կաթսայի (գուռերի), հոսույթ

(տեղ):

Ճ) իրանի ծոռում, 75 մմ-ից ավելի.

Ղ) տանիքի խախտվածք, վորի հետևանքով բեռը կարող է փշանալ ջրի թափանցումից, յեթե միայն այս խախտվածքը հնարավոր չե վերացնել անանջատ նորոգումով, ինչպես և դատարակ վագոնների այն պիսի խախտվածքներ, վորոնք պահանջում են վորխել տանիքի 2 կամ ավելի թիթեղը:

Ճ) արգելակային կահալորման խախտվածքը կամ բացակայությունը, յեթե անհրաժեշտ նորոգումը անհնար է կատարել գնացքի կանգնույթի ընթացքում:

Ճ) փոխարինում պահանջող խախտված ամբողջամտությունը (цельнокорпусн. նուկա), բացի այդ, արգելվում է գնացքներին կցել ճամբորդական այն պիսի վագոններ, վորոնք ունեն.

Ա) Ռեսորային կախիչների (պուրակ) և ողերի ջարդվածք:

Բ) Պուլմանի, ֆետուեյի յեռակի կախման սայակների և անբալանսիր սայլակների խախտում:

Ղ) Սահուկների (քոլիզոն) մեջ 6 մմ-ից մեծ և 2-մմ-ից պակաս արանքներ:

Ղ) Ծնոտների և բուքսերի մեջ արանքներ դումարով 8 մմ-ից ավելի, վագոնի յերկարությամբ և ընդլայնությամբ:

Ճ) իրանի ծոռում՝ 50 մի-ից ավելի:

Ղ) Անցությային սարհակների և ձողապատվարի (բարեր) խախտումներ, վորոնք սպառնում են ուղղուների անվտանգությունը մի վագոնից մյուսն անցնելիս:

Ե) Տանիքի կամ նրա մի մասի բացակայումը:

Ղ) Հրդեհ սպառնացող տաքացման պիտույքների (քրիզոր) խախտումները: Տաքացման պիտույքների այնպիսի խախտումներ, վորոնք խանգարում են վագոնների նորման տաքացմանը:

Թ) Ճեղքեր, ջարդվածքներ և դինամոմեքենաների ու ակումուլյարային մարտկոցների պնդացման և կանխելու դետալների բացակայությունը:

Ժ) Եկեկտրակահալորման դետայլների մերժեցումը և ելսի գլխին ավելի քան 100 մմ:

§ 226. Կայարանում վագոնները դետելու միջնական խախտված մասեր գտնելիս՝ այս մասերը նորոգվում են և տեղում խոկ փոխարինվում: Նրանց նորոգվումը և փոխարինումը տեղում անհնըրաբին լինելու դեպքում, խախտված վագոնները ուղարկվում են նորոգման կետերը:

§ 227. Վագոնների պարբերական նորոգման ժամկետը, կարգն ու պլանը, տեխնոլոգիական պրոցեսն ու նորմերը սահմանում են ՃՃկ վագոնային ՏԵՐԿԵՍՈՒԹՅԱՆ կենտրոնական Վարչության պետը:

§ 228. Նորոգումից դուրս յեկած վագոնները ընդունում են հատուկ նշանակված ընդունիչը:

§ 229. Կատարված նորոգման վորակի և գնացքի մեջ անվտանգ ընթանալու պատասխանատվությունը ընկնում է ինչպես դննումն ու նորոգումը անմիջապես

իրազործողների, նույնպես և գործարանների, արհեստանոցների և գեղարվանների ու վագոն նորոգող կետերի պետերի վրա:

§ 230. Գնացքա-վագոնային վարպետը այն հիմնարկան աշխատավորն է, վորը գծում ապահովում և վագոնների անխախտությունը, ժամանակին յուղում և և վորը կայարանային զննողների ջոկատի հետ միասին իրադործում և վագոնի առանց զատման նորոգումը:

Գնացքա-վագոնային վարպետը (իսկ այնուելք ուր նրանք մնում են՝ գնացքի յուղիչը) պետք է, գնացքը մեկնելուց առաջ մանրակրկիտ կերպով զննի վագոնները, ստուգի բուքսերի պատրաստման (Յառաքա) ճշտությունը և ակտիվորեն մասնակցի արդելակների փորձարկմանը:

Գնացքն ընթանալիս գնացքա-վագոնային վարպետը պետք է նախորոք տեղեկացնի զննման կետերին անանջատ անհրաժեշտ նորոգման մասին, վորն չի կարող ինքն կատարել իր սեփական միջոցներով:

3-ր դ գ և ու իւ .

## ԿՑԱՐԿՈՒՄ (ԾԵՊКА)

§ 231. Գծերում և ընդհանուրի ողագործման համար ճյուղերում գործող լոկոմոտիվներն ու վագոնները պետք ե ունենան պետության կողմից հաստատված տիպի (ՕԾ—6453) ավտոմատիկ կցարկում:

Բացառություն կարելի յե թույլատրել ավտո-

մոտորիստների և հատուկ ինքնարժեք վագոնների համար:

§ 232. Ավտոլցարկումը պետք ե սահմանված լինել ՕԾ—6452-ի հիմնական չափերի համեմատ:

§ 233. Սահմանված տրամի պառատակային լծառարք—մինչեւ շարժակազմի ամրող լծառարքի վերասարքավորումը, ավտո-կցարկումով՝ թույլատրումը եւ.

ա) Միջանցիկ, չհատվող, մի հաս դսպանական լծառարքային ապարատով և

բ) վոչ միջանցիկ, հատովի (разрезная), յերկու դսպանական լծառարքային ապարատով:

§ 234. Անցողական ժամանակաշրջանի ընթացքում—ավտոատակային լծառարք ունեցող լոկոմոտիվներն ու վագոնները ավտոլցումով սարքավորված վագոնների և լոկոմոտիվների հետ կցարկելիս՝ գործադրում են ՀՃԺԿ հաստատված տիպի հատուկ պարագաներ, ըստ վորում բուֆերները պահպանվում են:

4-ր դ գ և ու իւ .

## ԱՐԳԵԼԱԿՆԵՐ

§ 235. Լոկոմոտիվներն ու ճամբորդական վագոնները պետք ե կահավորված լինեն ավտոմատիկ և ձեռքի արգելակներով, բացի բազմային, վուստային վագոններից, վորոնք կարող են չունենալ ձեռքի արգելակներ:

## ՅԵՐԱՌՈՐԴ Բաժին

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԾԱՐԺՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

§ 236. Ապրանքային վագոնները պետք ե սարքավորված լինեն ավտո-արդելակներով՝ կամ արանքամբն (пролетными) խողովակներով։ Վագոնների մի մասը պետք ե ունենած ձեռքի արդելակներ և արդելակների համար սրահակներ։

§ 237. Ավտոմատիկ արդելակները պետք ե աճաշապալ սկսեն աշխատել, ողանույցը (воздухопровод) խրզվելու և անջատվելու դեպքում։

§ 238. Բոլոր ճամբորդական վագոնները, ինչպես և արդելակովների համար սրահակ ունեցող ապրանքային վագոնները, պետք ե սրահակի վրա ունենան շուտափույթ արդելակման համար ծորակներ։ Ճամբորդական վագոններում այդ ծորակները բացի սրահակներից, պետք ե գտնվեն նույնպես վագոնի ներսում։

Շուտափույթ արդելակման բոլոր ծորակները պետք ե պլոմբած լինեն։

§ 239. Նոր կառուցվող արդելակային վագոնները կահավորվում են ավտոարդելակները սարքավորելու համարեցումներով, թե դատարկ և թե բեռնած ուժի համար։

§ 240. Ավտո-արդելակային վագոնները պետք ե ունենան ծայրական ծորակներ (концевые краны), մի ծորակ ևս արդելակային սարքավորումը ողանույցից դատելու և բացման վակույթ՝ արդելակներն արձակելու համար։

§ 241. Լծակավոր փոխադրության (передача) բոլոր մասերը, վորոնց դատումը կամ ջարդվելը կարող են նրանց դուրս բերել դաբարիտից կամ թե վայր ձգել դժի վրա, պետք ե ունենան ապահովիչ սարքավորումներ։

§ 242. Գնացքների շարժումը գրաֆիկով—այսինքն՝ գնացքների ժամանակին մեկնումն ու ժամանումը կայարան և նրանց ընթանալը վազուրդներով—ապահովում ե կայարանի, դեպոյի և գնացքների յերթեկման հետ կազմած յերկաթուղու տրանսպորտի և այլ ստորաբաժանումների տեխնոլոգիական պրոցեսի ձիւտ կազմակերպումով։

ՅԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳԾԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

§ 243. ՅԵՐԿԱԹՈՒՂՈՒ գծերը անջատական կետերով բաժանվում են առանձին մասերի, վորոնք կոչվում են վազուրդներ (перегоны): Այն վազուրդները, վորոնց սահմանները, կայարաններ, ուղերաժամնք կամ թե առաջնատման կետեր են, կոչվում են «միջկայարանային», գծային ոլոստերով, կամ թե պատով ու կայարանով սահմանափակված վազուրդները՝ ևս «միջապոստային», և բլոկ-սեմաֆորների, լուսափորների մեջ զետեղված վազուրդները—«բլոկ-գծամասեր»։

## ԱՆՁԱՏԱԿԱՆ ԿԵՏԵՐ

§ 244. Անջատական կետեր համարվում են կայսրանները, ուղեբաժանքը, առաջատաման կետերն ու գծային պոստերը, իսկ ավտոկառակցման դեպքում և անցույթի լուսափորները:

§ 245. Գծային պոստ ե կոչվում այն անջատական կետը, վորը գծային զարգացում չունի:

Անջատական կետեր համարվող բացի գծային պոստերից, վաղուրդներում կարող են լինել նաև ոժանդակ պոստեր, վորոնք սպասարկում են ճյուղավորումների կցման կետերը:

Գծային զարգացում չունեցող վաղուրդների կետերը, վորոնք հատկացրված են ուղեորդներին նստեցնելու կամ իջեցնելու համար, անջատական կետեր չեն համարվում և կոչվում են «կանգնույթի ճամբորդական պլատֆորմներ»:

§ 246. Առաջատաման կետ ե կոչվում յերկուղի գծամասի այն անջատական կետը, վորը ունի գծային զարգացում և վորը թույլ ե տալիս միմիայն գնացքների առաջատում:

§ 247. Ուղեբաժանք ե կոչվում միուղի գծերում այն անջատական կետը, վորն ունի գծային զարգացում, թույլ ե տալիս գնացքների առաջատում, իաշաճեում և լոկոմոտիվների տեղափոխումը գնացքի մի ծայրից մյուսը:

§ 248. Կայարան ե կոչվում այն անջատական կետը, վորն ունի գծային զարգացում, վորը թույլ ե

տալիս վոչ միայն գնացքների առաջատաման և ինաչաձևման գործողություններ, այլ և բեռներ ընդունելու և հանձնելու մշտական գործողություններ, իսկ գծային զարգացման դեպքում՝ նույնպես գնացքների էտղմավորում:

§ 249. Յերկաթգծի կայարանները, նայելով աշխատանքի ընույթին, բաժանվում են. ա) ճամբորդական, բ) բեռնավորման (ապրանքային) և միացյալ կայարանների, վորոնք կատարում են ճամբորդական և բեռնավորման գործողություններ: Բայտեխնիկական նշանների, կայարանները բաժանվում են. ա) տեսակավորման, բ) գծամասային և գ) միջանկյալ կայարանների:

§ 250. Կայարանների ուղեբաժանքների և առաջատաման կետերի տերիտորիայի սահմանները, վաղուրդների կողմից՝ համարվում են մուտքի սեմաֆորներն ու լուսափորները:

Յերկուղի գծերում կայարանի սահմանները, ըստ յուրաքանչյուր գլխավոր գծի՝ համարվում են, մի կողմից այս գծի մուտքի սեմաֆորը կամ լուսաֆորը, մյուս կողմից՝ յելքի սեմաֆորը, կամ լուսաֆորը, իսկ յեթե նրա առաջ գետեղված են ոլաքներ, ապա սահման է ծառայում մի հատուկ ցուցիչ, վորը դրվում ե վերջին յելքի սլաքից 50 մ. հեռավորության վրա:

§ 251. Գծային պոստերն ու անցույթի լուսափորները վաղուրդները բաժանվում են տվյալ գծին վերաբերող անցույթի սեմաֆորի կամ լուսափորի կայմի առանցքով:

§ 252. Յուրաքանչյուր անջատական կետ, ոժան-

գակ պոստ և յուրաքանչյուր կանդնույթի ճամբար-  
գական պլատֆորմա՝ պետք և ունենալ վորոշ անուն  
կամ համար։ Անջատական կետի անունը պետք և զե-  
տեղված լինի ճամբորդական շենքի վրա (կամ դժա-  
յին պոստում) թե ճակատի և թե գնացքի մոտեցման  
յերկու կողմից ևս, խոշոր և գնացքից պարզ նկատե-  
լի տեսքով։

Գծային մեծ դարձացումով կայարաններում և  
մեծ ճամբորդական շարժումով կանդնույթի ճամ-  
բորդական պլատֆորմներում՝ անունը, բացի դրանից,  
պետք և զետեղված լինի և՛ ճամբորդական պլատֆոր-  
մանների և թե նրանց մերձեցման մոտերքում։

2-ր դ դ լ ո ւ իւ

## ՅԵՐԿԱԹՈՒՂՍՅԻՆ ԳԾԵՐ

§ 253. Յերկաթուղային գծերը բաժանվում են  
գլխավոր, կայարանային և Հատուկ նշանակման  
գծերի։

§ 254. Գլխավոր գծերին վերաբերում են վաղուր-  
դի գծերը և նրանց անմիջական շարումակությունը  
կայարանների, ուղերաժանքի և առաջատաման կետե-  
րում։

§ 255. Կայարանային գծերին են վերաբերում։

ա) ընդունիչ-առաքման,

բ) տեսակագորման,

գ) բեռնավորման և դատարկման,

դ) դեպոյական (լոկոմոտիվային և վաղոնային  
անտեսության) գծերը։

յե) մյուս այլ գծերը, վորոնց նշանակությունը  
վորոշվում է նրանց վրա կառարվող ոպերացիանե-  
րով։

Վաղուրդներում յել կայարաններում հատուկ  
գծերին են վերաբերում։

ա) գործարանների, կարիյերների և պահեստնե-  
րի գծերը։

բ) ապահովիչ փակուղիները։

§ 256. Կայարանային գծերը, նայելով աշխատան-  
քի բնույթին, միանում են առանձին խմբերի, վորոնք  
կոչվում են սրահներ (պարկ)։

§ 257. Յուրաքանչյուր կայարանային դիմ ունետք  
և ունենալիք սեփական համարը։

§ 258. Կայարանային տերիտորիայի սահմաննե-  
րում գտնվող բոլոր գծերը, ինչպես և տւրիչ սպա-  
ներին հանձնված գծերի հետ սահմանահատվող սլա-  
քային սփռառդրիչները գտնվում են կայարանի պետք  
կարգադրության տակ։

§ 259. Յուրաքանչյուր անջատական կետում պետք  
և գտնվի այդ կետի մասշտաբային պլանը։

3-ր դ դ լ ո ւ իւ

## ՍԼԱՔՅԻՆ ՓՈԽԱԴՐՉԱԲԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

§ 260. Բոլոր սլաքային փոխադրիչները պետք ե  
գտնվեն նորմալ վիճակի մեջ։ Նորմալ վիճակ ե հա-  
մարվում։

ա) Մի ուղի դժամասերում կայարանների գլուխավոր գծի մուտքի ոլաքի համար—կայարանի յուրաքանչյուր ծայրից դեպի տարբեր ուղիներ տանող ուղղությունը :

բ) Յերկուդի գծերում՝ գլխավոր գծերի ոլաքների համար—դեպի համապատասխան գլխավոր ուղիներ տանող ուղղությունը :

գ) Կայարանների և վազուրդների գլխավոր գծերի ոլաքների համար—վորոնք տանում են դեպի գծամատուցները (ողջ աշխատավայրում), դեպի փակուղիներ և այլ կայարանային գծեր, բացի ապահովիչներից—դեպի գլխավոր գծերը տանող ուղղությունը :

դ) Ապահովիչ փակուղիները տանող ոլաքների համար—դեպի այդ փակուղիները տանող ուղղությունը :

յե) Կայարանային այլ ուղիների ոլաքների նորմալ դիրքը վորոշում ե կայարանի պետը :

Սլաքների նորմալ դիրքը պետք ե ցույց տրվի տեխնիկա-կարգադրական ակտի և նրա քաղվածքների մեջ, ինչպես և ոլաքի պատվանդանի վրա,

Սլաքները կարելի յե այլ ուղղությամբ փոխել.

ա) Գնացքն ընդունելիս կամ առաքելիս :

բ) Մանյուրային աշխատանքի միջոցին :

գ) Գիծը շարժակազմով զբաղեցնելիս :

դ) Սլաքները մաքրելիս, ստուգելիս և նորոգելիս :

§ 261. Սլաքները համարակալվում են կարգային դույք համարներով զույգ գնացքների ժամանման կողմից, իսկ կենտ գնացքների ժամանման կողմից—կարգային կենտ թվերով :

§ 262. Վազուրդում զետեղված սլաքային վոլուս-դրիչը, սպասարկման համար վերագրվում է հարկան վորուե կայարաններից մեկին կամ թե ճյուղավորման տեղում հիմնվում է պոստ: Վազուրդում պոստի կողմից չուղասարկվող սլաքային փոխադրիչը բանալին պահպան է այն անջատական կետի հերթապահի մոտ, վորին վերագրված է սլաքային փոխադրիչը:

§ 263. Սլաքային պոստը պետք է գտնվի միմիայն մի աշխատավորի—հերթապահ պոստային սլաքավարի իրավասության տակ, վորը սպասարկածության մեջ ձեռքով սպասարկվող սլաքների փոխադրման և գնացքների անվտանգ յերթեւեկման համար:

§ 264. Կողապած սլաքների բանալին պահպան են կայարանի հերթապահի կամ ավագ սլաքավարների մոտ, ուր այդպիսիները կան:

Մեծ շարժումով փոքր կայարաններում, վորոնց ցուցակը վորոշվում է ճանապարհի պետի հրամանով, նշանակվում են ավագ սլաքավարներ, վորոնք անմիջականորեն սպասարկում են սլաքային պոստերը: Բոլոր ավագ սլաքավարները պաշտոնի մեջ են հաստատվում շարժման սպասի բաժնի պետի կողմից:

Հետեւալ ավելի պատասխանատու սլաքների բանալիները պահպան են կայարանի հերթապահի մոտ:

ա) Այսինքն, վտանգավոր բեռնավորումով վագոնների և ոժանդակ գնացքների կացույթի ուղին տանող սլաքներինը:

բ) Կայարաններում և վազուրդներում գլխավոր ուղիներին կցվող ճյուղերի և փակուղիների պոստերի կողմից չուղասարկվող սլաքներինը:

գ) Գլխավոր ուղիների միջի միացման սլաքների բառ:

դ) Վորտող փակուղիների սլաքներինը:

§ 265. Ընդունման և սուաքման միջոցին՝ ձեռքի սլաքների փոխադրումն ու պնդացումը կատարում է պոստային հերթապահ սլաքավարը միմիայն կայարանի հերթապահի ցուցմունքով (անձամբ հեռախոսվ, ավագ սլաքավարի և կամ ազդարարի միջոցով): Մանձուրային տեղաշարժումների միջոցին սլաքների փոխադրումը կատարվում է մանյովբները զեկավարով անձի կարգադրությամբ: Սլաքների փոխադրումը այլ անձանց միջոցով արգելվում է:

Դնացքն անցնելուց առաջ պետք է փակվեն կողմերով հարեան գծերում գտնվող սլաքները, գուրսքարշման (ՎԵՐԱՀԿԵ), ապահովիչ փակուղիների և այն սլաքները, վորոնք յեկը հնարավորություն են տալիս դեպի ընթացող դնացքի գիծը:

§ 266. Կայարանի հերթապահի կամ ավագ սլաքավարի սլաքի փոխադրման կամ մարշուտ սահմանելու կարգադրությունը սլաքավարը անպայման պետք է կրկնի, համոզվելու համար, վոր այդ կարգադրությունը նա հասկացել է ճիշտ: Կարդագրությունը կատարելուց հետո անհամար՝ սլաքանվարը պարտավոր է զեկուցել այդ մասին սլաքը փոխադրությունը ավող սլաքունական անձին:

§ 267. Սլաքը խախտված լինելու գեքում—(լեզվակի վոչ քիակ դիպումը, կողպեքի փչացումը, խարսխման (ոսածք) փչացումը, ցուցիչի վոչ ճիշտ գրութը (ձականք) և այլն)—սլաքավարը սլաքուավոր և անհամար տեղեկացնել ավագ սլաքավարին կամ թե

կայարանի հերթապահին: Այն դեպում, յերբ խախտումը սպառնում է շարժման անվտանգությանը, սլաքավարը պարտավոր է անհամապաղ նրա վրայով ընդհատել: շարժակալմի շարժումը, պատսպարել ազդանընդուներով և հայտնել այդ մասին կայսրանի հերթապահին անձանց անձամբ, կամ ավագ սլաքավարի միջոցով:

§ 268. Յուրքանչյուրք պոստային սլաքավար, իսկ այնտեղ, ուր կառավագ սլաքավարը պետք է գտնվի սլաքի, մոտ սլաքը գծի սպասի աշխատավորների կողմից՝ նորոգվելիս, հետեւելի նորոգմանը և համոզվի, վոր սլաքը նորոգված է և գտնվում է այնպիսի վիճակամ, վորն ապահովում է դնացքների անընդհատ յեկ անվտանգ յերթը:

§ 269. Սլաքային փոխադրիչների ճիշտ սլաքարկումը կախված է սլաքավարի պարզուոց աշխատանքից: Սլաքավարն ուղարտավոր է.

ա) Հերթապահությունն ընդունելիս, հերթապահությունը հանձնող սլաքավարի ներկայությամբ համոզվել, վոր նրա ռայտնի մեջ մտնող գծերի վրա փագոնները չեն դուրս դալիս սահմանային սյունիկներից սլաքները սարքին են, մաքուր և սլաքային ամրող գույքը իր տեղն է:

բ) Սլաքները պահել կողպած նորմալ վիճակում՝ համաձայն տեխնիկա-կարգադրական ակտի և սլաքները փոխադրել դնացքը ընդունելիս, թողարկելիս և ուղարկելիս՝ միմիայն ավագ սլաքավարի կամ կայարանի հերթապահի կամ կարգադրությամբ և տակ սլաքներին այն դիրքը, վորը ցուցը և տրվում կայարանի հերթապահի և ավագ սլաքավարի կողմից:

գ) Գնացքն ընդունելիս և ուղարկվելիս գտնվել իր

պոստի առաջին սլաքի վրա, ցեղեկը վարժաթած դեղին դրոշակով, իսկ գիշերը թափանցիկ-սպիտակ լույս ունեցող ձեռքի լապտերով:

գ) Գնացքն անցնելիս հետևել, թե գնացքը լրիվ կաղմով և հեռանում և ունե՞ր, արդյոք, սահմանված ազդանշաները:

յե) Բոլոր նկատած անհորմալությունները անհասպաղ հաղորդել ավագ սլաքավարին կամ կայարանի հերթապահին:

զ) Մանյովըները կատարելիս ուշադիր հետևել ազդանշաններին և խստորեն կատարել նրանց ցուցմունքը, ապահովելով արագ և անլուտանդ մանյովը աշխատանքը:

ը) Գիտենալ տեխնիկա-կարգադրական ակտից քաղված և պոստային չենքում կախած բոլոր կանոնները և ճիշտ կերպով պահպանել այդ կանոնները:

§ 270. Սլաքավարին վճռականապես արդելլում եւ.

ա) Գիշերով սլաքները թողնել չլուսավորված:

բ) Սլաքները դուրս բերել նորմալ դիրքից, յերբ չեն պահանջում աշխատանքի պայմանները:

տ) Սլաքները պահել չկողպած:

դ) Պոստում գտնվել առանց ընդունված արդաշանների:

յե) Հերթապահության միջոցին չհեռանալ իր պոստից՝ առանց կայարանի հերթապահի թույլության:

զ) Սլաքների մոտ չթույլ տալ կողմնակի անձանց:

4-ր դ գ լ ո ւ ի

## ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՈԳՏՎԵԼԱԻ ԿԱՐԳԸ

§ 271. Իբրև կանգնեցման ազդանշաններ՝ ծառայում են.

ա) Լուսաֆորների, սեմաֆորների և ազդանշանային լապտերների կարմիր կրակը:

բ) Դրոշակների և տեղափոխվելիք վահանների կարմիր դույնը:

գ) Սեմաֆորի թևի հորիզոնական դիրքը:

դ) Վորեւ իրի կամ ամեն տեսակի լույսով լաւ տեղների չրջանաձև պտույտ տալը:

յե) Սեմաֆորների և լուսաֆորների հանգած լույսերը և կամ նրանց անհասականալի ցուցմունքները:

զ) Անհասականալի և անձիշտ ազդանշաններ տալը:

ը) Ազդանշանային դործիքի Յ կարճ հնչյունները:

թ) Ճայլթոփիկի պայլթյունը:

ի) Քեր-ազդանշանային արգելող ցուցմունքը: Կանգնեցման ազդանշանները գործադրվում են.

ա) Անջատական կետերն և ուղեկապակցական ուղեմասերը պատսպարելու համար:

բ) Գծում գնացքներին անցույթ թույլ չտվող արգելքների պատսպարելը:

դ) Վազուրդում կանգնած գնացքն պատսպարեն համար:

զ) Մանյովըներին աշխատանք կատարելիս :

յե) Գնացքի պոչը պատսպարելու համար՝ գնացքը ընդունելիս :

զ) Գնացք կանդնեցնելու այն բոլոր դեպքերում, վորոնք սպառում են անվտանք շարժմանը կամ մարդկանց կյանքին :

§ 272. Անցնել փակ սեմաֆորն և լուսաֆորն վեռականապես արգելվում է : Ներկա կանոններով հատկապես կանխատեսնված բացառիկ դեպքերում՝ վակ աղքանշանի անցույթը թույլատրվում է մեմբրան սահմանված կարգով, մեջած հատուկ թույլատրվությամբ :

§ 273. Իրեն արագության նվազեցնող ազդանքանենք՝ ծառայում են.

ա) Լուսֆորների, սեմաֆորների, կանխաղղուցացնող սկավառակների, արագություն նվազեցնող մշտական սկավառակների և աղքանշանային լատոերների դեղին լույսը :

բ) Բայց դրոշակների կանխաղղուցացնող սկավառակների և տեղափոխիկ մահանների դեղին լույսը :

զ) Աղդանշանային դորձիքի 2 կարճ հնչյունը :

դ) Բաց դեղին դրոշակով, կամ դեղին կամ թափանցիկ—սպիտակ լույսի լատոերով՝ դանդաղ վերև և ներքև շարժելը :

յե) Քեր-աղդանշանի համապատասխան ցուցմունքը :

Արագություն նվազեցնող ազդանշաները գործադրվում են.

ա) Իրեն կանխաղղուցական աղդանշաններ՝ կանչնեցման աղդանշաններից առաջ :

բ) Գնացքը անջատական կետի կողքի ճյուղն ընդունելիս կամ ճյուղավորում ուղարկելիս :

զ) Գնացքը կացույթով կայարան ընդունելիս :

դ) Յերբ պատսպարվում են այն տեղերը, վորոնցով գնացքը պետք է ընթանա նվազեցրած արագությամբ :

յե) Մայովքային աշխատանք կատարելիս :

§ 274. Իրեն սահմանված արագությամբ շարժում քույլատրող ազդանշաններ՝ ծառայում են.

ա) Լուսաֆորների և սեմաֆորների կանաչ գույշը :

բ) Կանխաղղուցական սկավառակների արագություն նվազեցնող մշտական սկավառակների և տեղափոխիկ մահանների կանաչ լույսը :

դ) Սեմաֆորի թևի բարձրացումը 135°-ով :

Վորոշիված արագությամբ շարժում քույլատրող ազդանշանները գործադրվում են.

ա) Անջատական կետերում՝ գնացք ընդունելիք, ուղարկելիս և թողարկելիս (պրոցես) :

բ) Արագություն նվազեցնող աղդանշաններով պատսպարված ուղեմասից դնացքը դուրս գալիս :

§ 275. Արգելվում է կախել կարմիր, դեղին և կանաչ գույնի դեկորատիվ կտավներ, սլաքատներ, լույսեր, վորոնք խանգարում են յերկաթուղային աղդանշանների ծիչու ըմբռնումը :

§ 276. Սեմաֆորն ու լուսաֆորը վնասվելու դեպքում, ավտոմատիկորեն պետք է ընդունեն արգելող դերը :

§ 277. Աղդանշանների վատ յերեալու դեպքում (մառախուղ, բուք, հեղեղ, թանձր ճյունաթափ) —

կանխազգուշական սկավառակներ չունեցող փակված  
մռւտքի և անցույթի սեմաֆորները թե ցերեկով և  
թե դիշերով պետք է լրացնվեն ճայթուիկներով:

§ 278. Ավտոուղեկապակցումով չ սարագալու-  
ված բոլոր ուղեմասերում՝ մուտքի, յելքի և անցույ-  
թի սեմաֆորների նորմալ դիրքը համարվում է փակ  
դիրքը:

§ 279. Ավտոուղեկապակցումով կահավորված  
ուղեմասերում—անցույթի լուսափորի նորմալ դիրքը  
համարվում է բաց դիրքը, իսկ մուտքի ու յելքի լու-  
սափորներինը՝ փակ դիրքը:

Ճանապարհի այն ուղեմասում, ուր մուտքի ու  
յելքի լուսափորները կարող են փոխադրվել ավտոմա-  
տիկ աշխատանքի, գնացքներն կայարանով միջան-  
ցույթ տալու համար, բաց դիրքը համարվում է նոր-  
մալ, յերբ այդ լուսափորները փոխադրվում են ավտո-  
մատիկ աշխատանքի:

§ 280. Աղդանշանի ցուցմունքը հրաման և ե  
պետք է կատարվի առանց վորեե առարկության: Յեր-  
կաթզծի տրանսպորտի աշխատավորները բոլոր հնա-  
րավոր միջոցներով պետք է ապահովին աղդանշանի  
դպահանջների անհապաղ կատարումը:

Յերկաթզծի տրանսպորտի ամեն մի աշխատա-  
վոր, վորը կապված է գնացքների շարժման հետ,  
պետք է հաստատ և պարզորեն դիտենա աղդարար-  
ման հրահանդը:

5-րդ գ կ լ ու ի ն

## ԳՆԱՅՔՆԵՐԻ ՅԵՐԹԵՎԵԿՄԱՆ ԶՎԱՑԱՒՑԱԿՆ ՈՒ ԳՐԱՖԻԿԸ

§ 281. Բոլոր գնացքների շարժմումը կատարվում  
է խիստ չվացուցակով, վորն հաստատում է Հաղոր-  
դակցության ձանապարհների ժողովրդական կոմիսա-  
րը: Գնացքների շարժման չվացուցակը յերկաթզծի  
տրանսպորտի աշխատավորների համար յերկաթե ո-  
րենք և ցույց է տալիս յերկաթուղիների շահագործ-  
ման ամբողջ աշխատանքի պլանը:

§ 282. Գնացքների շարժման գրաֆիկով վորոշ-  
վում ե վոչ միայն գնացքների շարժմումը, այլ և լո-  
կոմուտիվի, վագոնների, կայարանների, պետքների,  
վաղոննորոգող կետերի, գծի, աղղարարման և կապի  
ամբողջ աշխատանքը, այսինքն, շարժման գրաֆիկից  
ե բջիսում յերկաթուղային տնտեսության այն բոլոր  
ստորաբաժանումների աշխատանքի պլանը, վորոնք  
կապված են գնացքների շարժման հետ:

§ 283. Լոկոմուտիվի շրջանառման գրաֆիկը կազ-  
մվում է գնացքների շարժման գրաֆիկի հիման  
վրա, հաշվի առնելով լոկոմուտիվի ամենաուղտավետ  
շահագործումը և գեղոյական տնտեսությունը կաղ-  
մակերպելու համար՝ ծառայում է հիմք:

§ 284. Գնացքների շարժման գրաֆիկը պետք է  
ապահովի:

ա) Ռեզերվների և բեռների արագ և հարթ տե-  
ղափոխումը.

բ) Գնացքների շարժման լավագույն արագությունը:

դ) Լոկոմոտիվների և վագոնների ամենաշահավետ ոգտագործումը:

դ) Բոլոր կայարանների աշխատանքի համաձայնեցումը մերձակա ուղղմասերի աշխատանքի հետ, ինչպես և իրար մեջ:

յն) Գնացքների անլիտանդ յերթը, թե վաղուրդներով և թե բոլոր անջատական կետերով:

§ 285. Գնացքների կազմավորումը կամուրջում և այն պլանով, վորը մշակում են ձանապարհները և վորը հաստատում է շարժման կենտրոնական Վարչությունը:

Գնացքների կազմակերպումը պետք է կանխատեսնի, վոր մարշրուտներն ու խմբական գնացքներն ընդուրկեն, վորքան կարելի շատ վաղոնահոսություն (ՎԱՐՈՒՊՈՏՈՒՄ):

§ 286. Տեղակոխումների տեսակետով և նշանակումով գնացքներն բաժանվում են.

ա) Ճամբորդական:

բ) Զինվորական:

դ) Սրագրածած ապրանքային գնացքների (հատկանիս, արժեքալոր և չուտ փչացող բեռներ, բազաժ և երե (խնիություն) փոխադրելու համար):

դ) Հանրացանցային չվացուցակի ապրանքային գնացքներ:

Ուղամասային չվացուցակի ապրանքային գնացքներ, վորոնց թվում նաև հավաքածուները:

§ 287. Հանրացանցային չվացուցակի ապրանքային գնացքների մեջ են մտնում.

ա) Առաքելք (օտպարանական) մարշրուտները, վորոնք առաջովազոված են ամենորյա բեռնավորումով.

բ) Գնացքներ, վորոնք ամեն որ կազմակերպվում են անմիջապես վագոնահասուցյուն ստեղծող ուղեմասերում (առաջարկած առաջարկած համունքներով):

դ) Գնացքներ, վորոնք ամեն որ կազմավորվում են կայարաններում մերձակա ուրեմասերից կազմակերպված վագոնային խմբեր ստանալով:

դ) Տեխնիկական մարշրուտներ, վորոնք ամեն որ կազմավորվում են տեսակավորման կայարաններում:

յն) Դատարկ վագոնաշարք (որոշույթ), վորն ամեն որ ուղարկվում է վորոշված ուղղություններով մասսայական բեռնավորման կետերը:

§ 288. Հանրացանցային չվացուցակի ճամբորդական և ապրանքային գնացքները հայտարարվում են ի գիտություն բոլորի:

§ 289. Գնացքների շարժման հետ կապված բոլոր աշխատավորները պետք է ունենան գնացքների շարժման չվացուցակի գրքույկ և կամ նրանց միջից կատարած քաղվածքներ:

§ 290. Գնացքների նշանակումն ու վերացումը կատարում են.

ա) Հեռավոր յերթի ճամբորդական գնացքներին՝ ՀՀ ճամբորդական կենտրոնական Վարչությունը:

բ) Ճամբորդական տեղական և մերձքաղաքային շարժման գնացքները՝ ճանապարհի պետը:

դ) Հանրացանցային չվացուցակի ապրանքային

զնացքներինը՝ ՀՃԺԿ շարժման կենտրոնական վարչությունը:

դ) Ռողեմասային չվայուցակի ապրանքային զնացքներինը՝ շարժման Սպասի հաժնի պետը;

յլ.) Զինվորական զնացքներինը շարժման Սպասի պետը:

զ) Աժանդակ զնացքներինը, մենյերթ լոկոմոտիվներինը, զրեղիներինը, ճնամաքրիչներինը և տրնուեսական գնացքներինը, վորոնք կանխատեսնափած չեն շարժման գրաֆիկով՝ զնացքային դիսպետչերը:

§ 291. Յուրաքանչյուր գնացքի հատկացնվում և վրուց համար: Մի ուղղության գնացքներին զույկ համար, իսկ մյուս ուղղությանը՝ կենտ համար.

Գնացքը մեկնելուց առաջ, կայարանի հերթական պարտավոր և հանձնել դիմավոր կոնդուկտորին գրանցքի կըսի, վագոնների քանակի, արգելակների առկայության (հալիցի), վագոնների նշանակման տեղի և կազմի տեխնիկական վիճակի մասին հատուկ գիտողությամբ՝ համապատասխան փաստաթուղթ:

Անհրաժեշտ գեղքերում՝ նաև կանխազգուշացում: Սրա հետ միաժամանակ կայարանի հերթապահը պարտավոր և տեղեկացնել Հարեւան անջատական կետի հերթապահին գնացքի ուղենորումը, վտունների քանակը և զնացքի կշռը:

§ 292. Բայց ավագությանը զնացքները բաժանվում են.

Ա. Հերթից դստր գնացքների՝ ոժանդակ յեզ առանձին լոկոմոտիվների, վորոնք նշանակվում են.

ա) Յերբ խորստակած կամ վթարված զնացքներին անբհաժեշտ և ողնություն հասցնել.

բ) Կապին ու կոնտակտային ցանցը նորոգելու համար, յերբ սրանք ընդհատվում են:

գ) Գիծն ու արհեստական կառուցվածքները վերանորոգելու համար, յերբ շարժումն ընդհատվում է:

դ) Հրդեհը հանդիցնելու համար:

յլ.) Զնի հուսնի միջոցին (որոնց չույնամատած անամաքը իշեր):

թ. Հերթական—ավագության կարգով.—

1. Բոլոր անվանումների ճամբորգարկան զնացքները:

2. Զինվորական—մարդկային և արագացրած ապրանքային գնացքները:

3. Հանրացանցային չվայուցակի ապրանքային զնացքների և մեներթ լոկոմոտիվները:

4. Մնացած ապրանքային, տնտեսական, փորձնական գնացքներն ու լոկոմոտիվները:

գ. Հատուկ պահանջով նշանակվող գնացքներ յեվ ավտոդրեգինեներ, վորոնց հերթը տրվում է նշանակման միջոցին.

§ 293. Գնացքային դիմումները պատասխանատու յե իր գծամասի գնացքների շարժման գրաֆիկի կատարման համար: Գնացքային դիմումներն պարագաւոր են.

ա) Ստուգել կայարանի աշխատանքը շարժման գրաֆիկի և գնացքների կազմավորման, պլանի կատարման տեսակետից և ցույց տակ կայարանի հերթապահին՝ գնացքների շարժմանը անհրաժեշտ բոլոր ցուցմունքները:

բ) Վերացնել նորմալ շարժման բոլոր չեղումնե-

րը, մուծելով գրաֆիկի մեջ չվացուցակից դուրս յե-  
կած զնացքները:

Դ) Հետևել կայարանից ուղարկվող և ընդունված  
գնացքներին, ինչպես և նրանց վազութովով ընթանա-  
լում, ձեռք առնելով այն բոլոր միջոցները, վրումք  
ապահովում են նրանց անվտանգ շարժումը:

§ 294. Գնացքների շարժումը կատարվում և  
Մուկվայի գոտու ժամանակով, 24 ժամյա հաշվար-  
կումով:

Բոլոր մեքենավարներն ու գլխավոր կոնդուկ-  
տորները պետք ե ունենան գրամմի ժամացույց: Մա-  
սայողական շենքերում, խոշոր կայարանների սրահնե-  
րում, ճամբորդական պլատֆորմներում ճանապար-  
հորդներին հատկացրած շինություններում պետք է  
ժամացույց լինի: Արտաքին ժամացույցները մութ  
ժամանակ պետք է լուսավորվեն:

Ժամանակի ցուցմունքը ժամացույցով յերկաթ-  
դի ամբողջ ցանցում պետք է լինի նույնը, վորի հա-  
մար ամեն որ կատարվում և ժամանակի ստուգում  
ճշշտ ժամանակի հաղորդման ազդանշանով:

6-րդ դ 1 ու ի

## ԿԱՅԱՐԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ

§ 295. Կայարանի տեխնիկական սարքավորումնե-  
րի ոգտակործման կարգն ու կազմակերպումը սահման,  
վում է տեխնիկա-կարգադրական ակտով:

§ 296. Տեխնիկա-կարգադրական ակտը կազմում  
է կայարանի պետը, ստուգում և շարժման սպասի  
վերաստուգիչը, և հաստատում է.

ա) Տեխնիկավորման, ուղեմասի, հանգույցային և  
և խոշորագույն բեռնավորման կայարաններին՝ շարժ-  
ման սպասի պետը, իսկ ճամբորդական կայարաննե-  
րին՝ նույն շարժման սպասի պետը՝ ճամբորդական  
սպասի պետի հետ միասին:

բ) Մյուս կայարաններին՝ շարժման բաժնի պե-  
տը:

§ 297. Տեխնիկա-կարգադրական ակտը վերանայ-  
վում ու ուղղվում է. գնացքների շարժման գրաֆի-  
կը, կայարանի դժային սարքավորումները, աղջա-  
րարման կենտրոնացման, ուղեկալակցման և կոն-  
տակտային ցանցի սարքարումները փոխելու:

§ 298. Տեխնիկա-կարգադրական ակտից կայա-  
րանի պետի կողմից կազմած ու հաստանոված քաղ-  
վածքները կախվում են կայարանային դիսպետչերի,  
սրահների հերթապահի, տեխնիկավորման բուլունների  
շենքերում, սլաքային պոստերում, կենտրոնացման պոս-  
տերում, կայարանային կատարողական պոստերում,  
դեպոյի հերթապահների, վագոն զնող հերթապահնե-  
րի, վագոնային գծամասերի դիսպետչերների շենքե-  
րում:

ԱՆՁԱՏԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ

§ 299. Կայարաններում պետք է լուսավորեն.

ա) Ճամբորդներին սպասարկող բոլոր կառուց-  
վածքները:

բ) Ճամբորդական, զինվորական և առլրանքային  
ոլլատֆորմները;

գ) Մշտական մանյովրային աշխատանք ունեցող  
գծերը;

դ) Ճամբորդական գծերը:

յե) Բեռնավորման գծերը:

զ) Ապրանքային բակերը:

հ) Վառելիքի և նյութեղենի պահեստը:

ը) Շարժակաղմի նորոգման ու տեխնիկական ուղարկման կետերը:

թ) Գծերի վրայի գծանցույթները:

§ 300. Լուսավորումը պետք է լինի բավարար և  
ապահովի գնացքների անխտանու շարժումն ու մանյովրային  
տեղաշարժումները, սպասարկող անձնակաղմի  
անընդունել աշխատանքն ու բեռների պահպանումը:

Արտաքին լուսավորումը չպետք է աղդի աղդու  
նշանային կրակների պարզ յերեվալուն:

### ՄԱՆՅՈՎՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

§ 301. Մանյովրային աշխատանքը կայարանում  
պետք է կատարվի կայարանի համար սահմանված  
տեխնոլոգիական պրոցեսով և այնպիսի պլանով, վո-  
րըն սպահովի.

ա) Գնացքների կաղմակորումն ու առաքումը իր  
ժամանակին;

բ) Գնացքների ընդունումը կայարան՝ առանց  
ընդունումների:

գ) Կայարանում վաղոնների վերադասավորման  
համար (переработка) ժամանակի ամենափոքր ծախսը:

դ) Մանյովրների համար տեխնիկական սարքավո-  
րումների և բոլոր մանյովրային միջոցների լրիվ ող-  
տակործումը:

§ 302. Մանյովրները կայարանային գծերում կա-  
տարվում են կայարանի հերթապահի կամ կայարա-  
նային դիսպեչերի և կամ գծերի հերթապահի կար-  
գագությամբ:

Մանյովր կատարող լոկոմոտիվի, մոտոր-վագոնի  
հսմ չարժակազմի չարժումները կարող ե կարգադրել  
միմիայն մի աշխատակից, վորն և պատասխանատու  
յի մանյովրների ճիշտ կատարման համար:

§ 303. Մեծ մանյովրային աշխատանքով և մեծ  
զծային զարգացումով կայարաններում՝ կայարանա-  
յին գծերը բաժանվում են մանյովրային շրջանների:

§ 304. Արգելվում է մանյովրների ընթացքում  
ընթանալ—ժամը:

ա) 40 կմ-ից բարձր արագությամբ, յերբ լոկո-  
մոտիվը տեղաշարժվում է աղաւո գծերում հետեւից  
կցած վագոններով:

բ) Ժամը 25 կմ-ից ավելի, յերբ լոկոմոտիվը  
չարժվում է աղաւո գծում՝ վագոններով դեպի առաջ,  
յեւ յերբ նա սլաքի վրայով չարժվում է դեպի կող-  
քի դիմ, անկախ այն հանդամանքից, թե լոկոմոտի-  
վը կողմն է դանում:

գ) Ժամը 10 կմ-ից ավելի, յերբ մանյովրը կա-  
տարվում է մարդկանցով և կամ վտանգավոր բեռնե-  
րով զբաղեցրած վագոնների հետ:

§ 305. Արգելվում է զիմանքոր գծերում մանյովր  
կատարել, կամ մանյովրի ընթացքում՝ կորել զիմա-  
նքոր գծերը; Արգելվում է նույնպես մանյովրի ըն-

Թացքում դուրս դաշ յելքի սլաքից : Այսպիսի մահ-  
յովներ կարող են թույլատրվել միմիայն մուտքի  
փակ աղջանչանների միջոցին և ամեն անդամ կայս-  
րանի հերթապահի թույլատրվյամբ :

Արգելվում ե մանյովրային կազմին դուրս դաշ  
կայարանի սահմաններից դեպի վազուրդ (պերօն)  
միուղի գծամասերում և վոչ ուղիղ գծով յերկուղի  
գծամասերում՝ առանց գնացքային դիսպետչերի և  
հարեան կայարանի հերթապահի համաձայնության և  
մեքենավարին տրվող առանց հատուկ թույլատրվյան :  
Մանյովրային կազմի դուրս դաշ կայարանի սահ-  
մաններից ուղիղ գծով յերկուղի գծամասերում՝  
թույլատրվում է կայարանի հերթապահի թույլատր-  
վյամբ : Ավտոռուղեկապակցումով գծամասերում, յել-  
քը կայարանի սահմաններից, թույլատրվում և լուսա-  
ֆորի բաց մանյովրային ազդանշանով :

§ 306. Վագոնների տեսակավորման համար բլու-  
րային կահավորում ունեցող կայարաններում, մահ-  
յովները կատարվում են ճանապարհի պետի կողմից  
հաստատված հրահանջներով :

§ 307. Գնացքներն ու շարժակազմը կայարանա-  
յին գծերում պետք ե զետեղված լինեն սահմանային  
ոյունիկներով նշանակված սահմաններում :

§ 308. Կայարանում կանդնած վագոնները, վո-  
րոնց հետ մանյովր չի կատարվում, պետք ե կցար-  
կըլած լինեն, արգելակված և փախուստից ապահո-  
վելու համար՝ պնդացրած :

Բեռնափորման և դատարկման գծերում, կողքի  
գծերում և փակուղիներում գտնվող վագոնները

պետք ե հուսալի կերպով ամրացրած լինեն տակդիր-  
ներով և սանդալներով :

Կայարանում կամնդնած և բեռնավորման համար  
չքաղեցրած, կամ մաքրման, ախտահանուման և նո-  
րոգման չսպասող վագոնների դրույթը պետք ե փակ  
լինեն :

§ 309. Առաքման համար պատրաստի և կամ  
կազմալուծվելուն (расформирование) սպասող վագոն-  
ները 0,0025-ից բարձր թեքվածք ունեցող կայարա-  
նային գծերում կացույթ ունենալիս պետք ե սեպա-  
վորված (пограничны) լինու : Միմիայն մթնոլորտա-  
յին վատ պայմաններում (քամի, բուք) հորիզոնական  
գծերում՝ պահանջվում նրանց պնդացնել : Զեռքի ար-  
գելակներ ունեցող վագոնները պետք ե արգելակված  
լինեն :

§ 310. Արգելվում ե ապահովիչ փակուղիները  
զբաղեցնել շարժակազմով :

§ 311. Պայթուցիկ և թունավորող բեռներով և  
գաղերով վագոնները կայարանում կամնդնեցնելիս՝  
պետք ե զետեղված լինեն առանձին ուղիներում :

Այսպիսի վագոնները պետք ե կցարկված լինեն,  
սեպակորմած և պատապարկված տեղափոխիկ աղյու-  
շաններով :

§ 312. Մանյովրային աշխատանքի անմիջական  
իրաղործումը կատարում է կազմող ջոկատի բո-

լոր աշխատավորներին և մանյովրային շողեշարժի  
աշխատանքը և պետք ե .

ա) Ապահովիչ կայարանամանյովրային աշխա-

տանքի կարգադրել և պատվիրանքի ճիշտ և ժամանակին կատարելը:

բ) Գնացքներն կազմավորի ուղիղ, առանց հապաղումների և նրանց առաջման չփացուցանիկի համաձայն:

գ) Մանյովրային աշխատանքը կազմակերպել այնպես, վորպեսզի լոկոմոտիվներն ու վագոններն ապահովված լինեն վթարից:

### ԳՆԱՑՔՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

§ 313. Գնացք և կոչվում մի կամ մի քանի տանող լոկոմոտիվներով կազմավորված ու կցված վագոնների կազմը, վորն ունի համապատասխան ազդանշաններ և վորին սպասարկում և գնացքային ջոկատը:

§ 314. Լոկոմոտիվները, մոտոր-վագոնները, ալտոմոտորիստները և վոչ հանովի տիպի ավտոկրեյդները, վորոնք վաղուրդ են ուղարկվում վագոններով կամ առանց վագոնների՝ դիտվում են իրեն գնացք:

§ 315. Գնացքը պետք է կազմված լինի կազմավորման պլանի և գնացքների շարժման դրաֆիկին լիովին համապատասխան:

### ԳՆԱՑՔԻ ԿՇԽԻ ՅԵՎ ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ

#### ՎՈՐՈՇՈՒՄԸ

§ 316. Գնացքի ունիֆիկացրած կշխն ու յերկարությունը սահմանում են.

ա) Տրանզիտային ուղղությամբ ընթացող աղբանքային գնացքների՝ ՀՃՔ շարժման կենտրոնական

վարչությունը, ՀՃՔ շարժմանին տնտեսության վարչության հետ միասին, իսկ ելեկտրիֆիկացրած գծերում՝ ՀՃՔ ելեկտրիֆիկացման կենտրոնական Բաժնի հետ միասին:

բ) Եերկու կամ ավելի ճանապարհով ընթացող ճամբորդական գնացքներինը՝ ՀՃՔ կենտրոնական ճամբորդական վարչությունը ՀՃՔ շոգեքարչչին տնհության վարչության հետ միասին, իսկ ելեկտրիֆիկացրած գծերում՝ ՀՃՔ ելեկտրիֆիկացման կենտրոնական Բաժնի հետ միասին:

գ) Մյուս այլ ապրանքային և ճամբորդական գնացքներինը՝ ճանապարհի պետը:

§ 317. Գնացքի կշխոր շարժման զործող գրաֆիկի համար կշռային նորմերով վորոշված կշռից պակաս չպետք է լինի: Գնացքների առաքումը պակաս կշռով թույլատրվում է ճանապարհի պետի վորոշված կարգով:

§ 318. Գնացքի մեջ տարբեր տիպի շարժակազմ զետեղելիս՝ նրա կշխն ու յերկարությունը վորոշում են Ա և Բ աղյուսակներով:

§ 319. Գնացքի յերկարությունը (արևիների թվով) չպետք է գերազանցի տվյալ գնացքի իր գծամասում յերթնեկող ընդունիչ-առաքման, ուղերժանքի և առաջատաման գծերից: Ճանապարհների պետերին իրավունք է արգում սահմանել գնացքների այնպիսի կազմ, վորոնք իրենց յերկարությամբ գերազանցում են վերը հիշված կայարանային գծերից, բայց յերկու կայարանային գծերի ողափակար յերկարությունից վոչ ավելի, սակայն միևնույն ժամանակ

„Ա ԱՎԱԽՈՒՅԻ. ԳՆԱՑՔԻ ԷՋԻԻ ՎՈՐՈՅՈՒՄԸ

ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՏԵՍԱԿԸ	ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՄԻԱՎՈՐԻ ԿՀԻԱԾ յուրաքանչյուր Առնուն՝ տոններով	
ԱՆԱՐԴԻՄ- ԼԱՄԱԿԻ	ԱՆԴԻՄ- (ԱՎՈՉ- ՃԱՄԱ- ՃԱՆՔ- ԳԻՎԱՆԱԾՈՒՅՆ)	
I. Ենրկումի, ապրանքային որակի		
ա) Մածկովի կիսավագոններ, վանդակալոր վաղոններ (քշետք), տեղուշկաններ, ցիսաերներ . . . . .	3,5	4,0
բ) Մածկովի, 20 տոննանի . . . . .	4,7	5,3
շ) Պատփորմներ, 20 տոննանի . . . . .	4,0	4,5
զ) Պատփորմներ, սովորական . . . . .	3,5	3,8
II. Ապրանքային սրակի յեռումի պլատումներ . . . . .	3,5	4,0
III. Քառունի, ապրանքային պարկի վագններ		
ա) Մածկովի և Փոկո-Արքելի սիստեմի կիսավագոններ . . . . .	4,1	4,3
բ) Մածկովի ԽՀՄ-ում կառուցված կիսավագոններ և ամերիկանի . . . ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ավտոկապակցում կանավորված վաղոնների տարան հավելվում և 0,8 տոննով:	5,2	5,5
IV. Մյուս բոլոր մեծարեն և ապրանքային սահի հատուկ վագոնները (հուշանի վագոնները, գոնդոլները, խորակները, ցիսաերները, անասնական, պոտունների վագոնները, սառցարաններ, վագոն-ձնամաքրիչների և այլն) . . . . .	Խարսխի գըլ- դոնների վրա ցույց տված կըլլն	

ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՏԵՍԱԿԸ

ԱՆԱՐԴԻՄ- ԼԱՄԱԿԻ	ԱՆԴԻՄ- (ԱՎՈՉ- ՃԱՄԱ- ՃԱՆՔ- ԳԻՎԱՆԱԾՈՒՅՆ)	ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՄԻԱՎՈՐԻ ԿՀԻԱԾ յուրաքանչյուր Առնուն՝ տոններով
V. Ճամբորդական սրահի վագոններ—ճամբորդական, ծառայողական, պուտատար, բազաժային, ճաշարաններ և այլն . . . . .	Խարսխի գըլ- դոնների վրա ցույց տված կըլլն	Խարսխի գըլ- դոնների վրա ցույց տված կըլլիվ:
VI. Լոկոմուտիվներն առանց տեսներների յևի չգործօղ վիճակում.		
ա) ՓԱ շոգեարժեք և եկեկարոշարժեք	20,0	
բ) ԽԱ շոգեարժեք և ջերմաշարժեք . . .	17,0	
շ) Ե, Թ, Ա, Լ, Ս, Կ, Ե, Բ, Վ շոգեշարժեք և կեսլիի սիստեմի ձնամաքրիչներ ու ավտովագոններ . . . . .	14,0	
զ) Մյուս, փոքր կորովի (մօշհութ) լոկոմուտիմերը (կորոնց թվում օ շոգեարժը) . . . . .	12,0	
VII. Լոկոմուտիվի տեսներներն ու կեսլիի ձնամաքրիչը . . . . .	6,25	
թ. Բնիլն ՅԵԼ ԳՆԱՑՔԻ կըլլիլ		
1. Բեռան կհիաը վորոշվում և յուրաքանչյուր վագոնի բեռնագրով.		
2. Այն գեալում, յերբ բեռնագրում ցույց չի տրվում յուրաքանչյուր վագոնի կհիաը, ապա մինչև վագոնի կհիաը լուսակա կիցուղի վագոնային կհիաք ունեցող կայարանում, բեռան կհիաը հաշվի յեն առնում պայմանորեն, իր տարիֆային վտ գույային նորմավ, իսկ յեթե այդպիսին նրա համար սահմանված չէ, ապա բեռան կհիաը վորոշում են վագոնի բեռնագարձ ուժով:		

## “Բ” ԱՂՅՈՒՍԱԿ. ԳՆԸՑՔԻ ՅԵՐԱԲՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Գնացքի յերկարությունը գորոշելիս՝ պայմանական միավոր ե չնդունվում նորությունը ծածկովի յերկունի վագոնի յերկարությունը (8 մետր): Յերք գնացքը կազմում են տարրեր տիպի վագոններից ու լոկոմոտիվներից, ապա վեր ջիններիս յերկարությունը գերցնում են հավասար:

### Վ. Գ. Ա. Ն. Ն. Ե. Բ. Տ. Ե. Ս. Ա. Կ. Հ.

Հավասար են  
ծածկովի յերկ-  
ունի նորմալ  
վագոններին

#### Ա. Ճամբարդական սրահի վագոններ

1. Ճամբարդական սրահի քառոսունի, ինչպես և փոստային, բաղաժի և ծառայողական վագոններ	2,5
2. Քառոսոնի, նոր, 25,2 մետրի . . . . .	3,5
3. Նույնը, յեռոսոնի և յերկունի . . . . .	2,0

#### Ա. Սպարանեային սրահի վագոններ

4. Քառոսոնի, ծածկովի վագոններ, կիսուակա- գոններ, հատող և անամսնական, իջոտեր- միկական վագոններ և պատափորմաներ	1,3
5. Քառոսոնի, ծածկովի 35 թիվը կառուցված	2,0
6. Քառոսոնի խոպերներ . . . . .	1,3
7. Քառոսոնի ցիստերներ . . . . .	1,5
8. Յեռոսոնի իջոտերմիկ և անամսնական . . . . .	1,5
9. Յերկոսոնի 20 տոննանի պլատֆորմներ	1,3
10. Մնացած յերկոսոնի ծածկովի վագոններ, իջոտերմիկ, խոպերներ, ցիստերներ և պլատֆորմներ . . . . .	1

#### Պ. Լոկոմոտիվներ ու տեղերեներ

11. Փ. Հարակարգի այլ քառոսոնի և ավելի սույներով լոկոմոտիվներ, առանց տես- դերի . . . . .	2
12. 4-ից ավելի քիչ սանի ունեցող առանց տեսդերների լոկոմոտիվներ . . . . .	1
13. 3 և 4-սանի տեսդերներ . . . . .	1
14. 6-սանի տեսդերներ . . . . .	1,5

այսպիսի յերկարակազմ գնացքները գծամասով թո-  
ղարկելու համար՝ սահմանվում ե ըստույժ կարդ:

### ԳՆԱՑՔԻ ՄԵՋ ՎԱԴՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

#### § 320. Արդելվում ե գնացքի մեջ զետեղել.

ա) Այնվտանդ շարժմանը սպառնող տեխնիկապետա-  
մուարդ վագոններ:

բ) Վորոշված թույլատրումից բարձր ռեսուրնե-  
րի անհամաչչափ իջվածքով բեռնած վագոններ:

գ) Այնպիսի վագոններ, վորոնք յերբեք ուղա-  
րեց դուրս են ընկել և կամ յեղել են խորտակված,  
վթարված գնացքների մեջ՝ մինչև նրանց գննելն ու  
շարժման համար պիտանի ճանաչչափելլ:

դ) Սահմակած նորոգման տեսակների կատար-  
ման մասին տրաֆարետ չունեցող վագոններ, բացա-  
ռությամբ այն վագոնների, վորոնք գործարանից ըն-  
թանում են հատուկ վաստավիթութելով, իբրև սոնի ու  
նեցող բեռներ:

է) Բուֆերային բաժակների սահմաններից և  
դաբարիսի յեղիներից դուրս յեկող բեռնած պլատ-  
ֆորմներ, յեթե այսպիսի պլատֆորմի յերթի մասին  
չեն արվել հատուկ ցուցմունքներ:

զ) Յերկուսից ավելի ընդհանուր բեռնով միա-  
ցած պլատֆորմներ, յեթե նրանք հարմարեցրած չեն  
այսպիսի բեռնակրմանը:

է) Զեռքի արեկակներով կահավորված և պայ-  
թուցիկ, թունավոր նյութերով բեռնած վագոններ,

բացի այն բեռներից, վորոնք կամխատեսված են ձանապարհներին ուղարկող հատուկ ցուցակով:

Պայմանագրի նյութերով բեռնած վագոնների ավտո-արդելակները պետք են հանդած լինեն:

§ 321. Արգելվում են ճամբորդական գնացքների մեջ դետեկտ:

ա) Պայմանագրի, թունավորող, ուղամական ինքնաբորբոք, գյուրավառ, կծու և զարչելի հոտ ունեցող բեռներով վագոններ:

բ) Պարբերական նորմումների, արգելակների գննման և բուքսերի վերաքննման համար վորոշված ժամկետներից ուշացրած վագոններ:

դ) Վորոշված նորմերից գերվազք (պերոբեր) ունեցող ելեկտրովազոններ, յեթե չկա համապատասխան հետաձգում (օտքուկա):

### ՎԱԳՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿՈՒՄԸ ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՆԱՑՔՆԵՐՈՒՄ

§ 322. Տարբեր տիպի վագոններից ճամբորդական գնացքներ կազմելիս՝ վեցսունի և քառսունի վագոնները դրվում են գնացքի գլխին: Ուղերձներով զբաղեցրած վագոնները անջատվում են լոկոմոտիվոց բագաժին և կամ այլ մարդկանցով շղարեցրած վագոններով: Յեթե պաշտպանություն ծառայող բարձրի կամ այլ վագոնը, խախտման պատճառով ճանապարհին դատվում են կամ թե տեղափոխում են պոչի կողմը, ապա այս դեպքերում, երբեմ բացառություն, գնացքն ընթանում է առանց սլաշտականող վագոնի:

§ 323. Մերձգաղաքային գնացքներում օլոցտուանող վագոն չի դրվում: Առաջին ճամբորդական վագոննում ճակատի դուռը, լոկոմոտիվի կողմից պետք են փակ լինի և անցույթի սրահակը պետք են ամրացրած լինի բարձրացրած դիրքով: Տարբեր տիպի վագոնների դեպքում՝ քառսունի վագոնները, մերձգաղաքային գնացքների մեջ, զետեղում են գնացքի մեջ տեղում:

§ 324. Գլխավոր գծերում, ճամբորդական գնացքների մեջ՝ արգելվում են ապանքային վագոնները գընել: Բացառիկ դեպքերում ճանապարհի պետին իրավունք ետքում ճամբորդական գնացքի մեջ, իր ճանապարհի սահմաններում, ապանքային վագոնները զետեղել (բացի ճեպընթաց և արագ գնացքներից), իսկ չձեկ կենտրոնական ճամբորդական վարչության պետին՝ յերկու կամ այլելի ճանապարհներուլ ընթանալիս: Ճամբորդական գնացքներին կցվելոք ապանքային վագոնների թիվը պետք են լինի 8 սըսնուց վոյ ավելի, ըստ վորում՝ գնացքի գլխին կարող են դրվել միմիայն քառսունի վագոնները:

§ 325. Մոտոր-վագոննային քարշի դեպքում՝ ելեկտրական դնացքները կազմվում են սեկցիաներով:

Մեկցիան կազմվում են մի մոտորվագոնից, վորին կցվում են մի կամ միքանի կցվող վագոններ: Մոտոր-վագոնները կարող են տեղաբաշխել սեկցիայի թե դըխում ու կենտրոնում և թե պոչում:

### ՎԱԳՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿՈՒՄԸ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐՈՒՄ

